

Մնափառութիւնն և պահ-
պանողականութիւնը շատ
մեծ:

Յամառութիւնն ու ինքնա-
հաւանութիւնը մեծ:

Կարծում է թէ Մեսիա է:

Նորադարձ մովսիսական է:
հրէաներին պիտի առաջնորդէ
Անդլիան նուաճելու:

ՀԻՒՄՆԴ C. S.

Մտածողական գործարաննե-
րը բնորոշակի:

Թւի գործարանը՝ չափա-
զանց մեծ:

Մի բանի վրայ է խելագա-
րուել—շարունակ պարապուած
է թւանշաններով և թւաբա-
նութեամբ:

ԿԻՆ-ՀԻՒՄՆԴ M. D.

Բարոյական ընդունակու-
թիւնները բացակայ:

Յոյսը անչափ փոքր:

Կործանութիւնն ու նա-
խազգուշութիւնը չափազանց
մեծ:

Սաստիկ տրամութիւն:

Ինքնասպանութեան, մենա-
մոլութեան:

Դունստանեան խենթանոցում, Նիւկեստլի մօտ, Կոմբր
երկու բժիշկների, Շալյենեան Լրաբերի խմբագրի և մի քանի ու-
րիշ անձանց ներկայութեամբ, քննեց մի քանի հիւանդների դը-
լուխները. այդ հիւանդներին նրան ներկայացնում էր խենթա-
նոցի հիմնադիր Վիլկինսոնը, որը իր սեփական նկատողութիւն-
ներն է կցել հիւանդների խելագարութեան տեսակի մասին:

Կոմբի ընտրողումը:

Վիլկինսոնի նկատողու-
թիւնները:

ՀԻՒՄՆԴ J. F.

Ինքնահաւանութիւնն ու
հաստատամտութիւնը մեծ:

Հրաշքը, խորհրդաւորու-
թիւնը և ընշասիրութիւնը
նոյնպէս մեծ:

Իրան Մեծ Աստուած է հը-
րատարակում, ձգտում է մեծ
ակնածանք ներշնչելու դէպի իր
անձնաւորութիւնն և զօրու-
թիւնը: Մանր գող է, ծպպում

Խելագարութեան բնորոշ է ամեն չնչին բան, հէնց որ կողմերը պիտի լինեն—ինքնահաւանութիւնը, հաւանական է՝ նոյնպէս խորամանկութիւնն ու գողութիւնը:

ՀԻՒՄՆԴ R. M.

Մտածողական գործարանները մեծ:

Նմանողութիւնը շատ մեծ: Կուարարութիւնն ու կործանութիւնը շատ մեծ:

Յոյսը և խղճահարութիւնը բացակայ:

Բնաւորութիւնը շատ կատաղի, երեխան ճնասպանութեան փորձեր է արել. սաստիկ արտայայտական ոյժ ունի դիմագծերի և շարժումների մէջ:

Արտակարգ ընդունակութիւններ ունի ամեն տեսակ մեքենական աշխատութիւններ կատարելու: Ձափազանց կատաղի է, զարմանալի կերպով նմանեցնում է ուրիշներին: Դէմքը սաստիկ արտայայտիչ է դառնում, երբ բորբոքւում է:

ՀԻՒՄՆԴ H. C.

Սաստիկ կուարարութիւն, անչափ անձնապաշտութիւն: Յամառութիւնն և Զաւակասիրութիւնը մեծ:

Մտածողական կարողութիւններն և Նմանողութիւնը մեծ:

Ընդունակ է ծայրայեղ ծրարագիրներով յափշտակուելու և մեծ վճռականութեամբ նրանցի կատար անելու. կարող է մեծ նմանողական տաղանդ և արտականդ ընդունակութիւններ ցոյց տալ բնական լեզուի մէջ (միմոս է):

Այս ամենը ճիշդ որոյում է սրա բնաւորութիւնը: Իրան թագաւոր է երևակայում, հակում ունի նմանեցնելու, իր սածիլ է և սիրում է մանուկներին:

Նոյն թւի հոկտեմբերի 28-ին Կոմբը մի քանի բժիշկների

և ուրիշ անձանց ուղեկցութեամբ, որոնք լսել էին նրա դասա-
խօսութիւնները, այցելեց Նիւկեաստիւան բանտը: Նա քննեց մի
քանի յանցաւորներին և գրեց նրանց բնորոշումները: Միևնոյն
ժամանակ դ-ր Ջորջ Ֆայֆը, բանտային գլխաւոր բժշկի օգնա-
կանը, որը ոչ մի գաղափար չ'ունէր դանդաղանութեան (ֆրե-
նոլոգիայի) մասին, համառօտ գրաւոր վկայութիւններ տուեց
այդ յանցաւորներին մասին, հիմնուելով նրանց հետ իր ունեցած
անձնական ծանօթութեան վրայ: Գննուեցին երեք յանցաւոր:

Կրմը

Դ-ր Փայֆ

P. S. (18 տարեկան)

Իմ կարծիքս այն է, որ այս
տղան մեղադրուած է ոչ ըրո-
նաբարութեան մէջ. խաբելու
տաղանդ ունի և ձգտում ու-
րիշի սեփականութիւնն իւ-
րացնելու, ընդդէմ արդարու-
թեան կամ օրէնքի: Ամենից
հաւանականն է, որ բռնուել
է յաւիշտակութեան մէջ: Ու-
նի դերասաններին յատուկ ըն-
դունակութիւններ:

Երկու անգամ մեղադրուել
է գողութեան մէջ. երբէք
չէ ցոյց տուել դաժանու-
թիւն, բայց ազնւութեան
զգացմունքից բոլորովին զուրկ
է: Սա մի քանի անգամ փոր-
ձել է հարկադրելու դ-ր Ֆայ-
ֆին, որ վերջինս... Նմանո-
ղութեան տաղանդ ունի:

T. S. (18 տարեկան)

Այս տղան բոլորովին ուրիշ
տեսակ է, քան թէ նախորդը:
Սա հաւանական է՝ բռնաբա-
րել է որեէ կին: Գուցէ և գո-
ղացել է, թէև ես այս վերջի-
նըս աւելի քիչ հաւանական
եմ համարում: Սա ունի բա-
ւականին մտաւոր կարողու-
թիւն և բոլորովին ուղղելի է:

Յանցանքը — բռնաբարու-
թիւն է: Բնաւորութիւնը
մեղմ է, երբէք ցոյց չէ տուել
խելական արատաւորութիւն:

J. W. (18 տարեկան)

Այս տղայի տեղը աւելի խե-

ղի է. յամառ, ապերախտ,

լառանոցն է, քան թէ բանտը: անդարձ կորած բնաւորու-
Բարոյական գործարանները թիւններից մէկը,
չափազանց թայլ են դարգա-
ցած: Մտածողական ընդունա-
կութիւնները չափաւոր են,
զգուշութիւնը՝ չափ մեծ: Ոչ
մի զսպում ստոր հակումների:

Ահա այլեւ մէկ ուրիշ փորձ.

Մի վերաբոյժ Չատամսից ուղարկել էր դ-ր Էլլիոտսոնին
մի մարդկային զանգ, բացատրելով որ ինքը, ուղարկողը, պատ-
կանում է մի դրական շրջանի, որի անդամները պառակտուել
են գանգաբանութեան խնդրի առիթով, և որ այն այդ շրջանում
որոշել են ուղարկել նշանաւոր գանգաբաններից մի քանիսին
մի այնպիսի մարդու գանգը, որի բնաւորութիւնը ամենքին լաւ
յայտնի լինէր—և խնդրել, որ այդ մեռած մարդու բնաւորու-
թիւնը որոշեն: Էլլիոտսոնը, որը չէր ճանաչում գանգ ուղար-
կողին, հետեւեալ նկարագիրը տուեց հանգուցեալի բնաւորու-
թեան.

Շիմ կարծիքով, սա սաստիկ կրքերի տէր մարդ էր, և կըր-
քերը գերիշխում էին սրա բանականութիւնից: Ունէր մեծ հա-
կում ըռնաբարելու, բայց երբէք չի եղել քաջասիրտ. վե-
րին աստիճանի զգոյշ էր եւ խորամանկ. սեռային պահանջ-
ները մեծ էին, և զաւակասիրութիւնը աչքի ընկնող: Չեմ
կարողանում գտնել սրա մէջ ոչ մի բարի յատկութիւն, բա-
ցի զաւակասիրութիւնից, եթէ միայն զաւակներ ունեցել է:
Այս մարդու ամենամեծ մտաւոր յատկութիւնն է, իմ կարծի-
քով, սրամտութիւնը: Սա կարող էր լաւ միմիկա ունենալ:

Այս մարդու իսկական պատմութիւնն և իսկական բնաւո-
րութիւնը վերջապէս յայտնուեց. գլխաւոր կէտերը սրանք են:
Պատուաւոր ծնողների որդի լինելով, հանգուցեալը սակայն վա-
ւաչոտ և արատաւոր մարդ է եղել: Ագարակատէր դառնալով
Չէչերում, սկսել էր պարապել աղի մաքսանենգութեամբ. ա-
ղից այդ ժամանակ մաքս էին առնում: Նրան վաղուց կասկա-
ծում էին այս պարապմունքի մէջ, բայց բռնել ոչ մի կերպ չէ-
ին յաջողում: Վերջը նա օգտուել էր իր օգնականից մաքսա-
նենգութեան մէջ և հնձուած հաց էր գողտնում շրջակայ ագա-
րակատէրներից, որովհետև այդ օգնականը, իբրև նոյնպէս ագարա-
կատէր, կարող էր գողացած հացը ծախել առանց որեւէ կաս-
կած յարուցանելու: Վերջապէս նրան բռնել էին և մահի դա-
տապարտել, բայց պարիթը փոխուեց յաւիտենական աքսորի,

բայց ծերութեան պատճառով նրան արտօր չ'ուղարկեցին Ան-
դրայից դուրս, այլ փակեցին մի նաւի մէջ, որը բանտի տեղ էր
ծառայում տաժանակիր աշխատանքների դատապարտուածներին
համար: Երկու տարուց յետոյ, ատողջութեան թուութեան պատ-
ճառով, նրան տեղափոխեցին հիւանդանոց, որտեղ և մնաց մին-
չև մահը: Նա շատ սակաւախօս էր, երբ խօսք էր բացւում նրա
անցեալի մասին, բայց շուրջը բարի վերաբերմունք տեսնելով
դէպի ինքը, խոստովանուեց հետեւեալ փաստերի մէջ. 1) որ թէև
ինքն անառակ կեանք է վարել, այնուամենայնիւ երբէք մարդասպան
չէ եղել. 2) որ ունեցել է կին և ութը զաւակ, բայց և մի ապօ-
րինի զաւակ վալլիում և մի քանի սիրուհիներ անբութեան
զանազան մասերում, մինչև իր ձերբակալուելու օրը:

Հիւանդանոցում նա ցոյց էր տալիս կծու սրամտութիւն
ու հեզնութիւն, ծաղրելով բոլոր շրջապատողներին, իր ձևերով
և խօսակցութեամբ նա յաճախ ծեւացնում էր հիւանդանոցի
բահանային. սաստիկ սիրում էր իր զաւակներին և յաճախ
յիշում էր նրանց մասին զգացուած ու ստաշարժ բառերով:

Նկատեցէք, որ այս մարդու բնաւորութեան ըլլոր յատուկ
գծերը, ինչպէս որոշել էր դ-ր Էլլիոտսոնը, բոլորովին համա-
պատասխան դուրս եկան իրականութեանը, թէև նրանց հա-
մախմբումը շատ և շատ արտասովոր էր, և ամեն մի չը նախա-
պաշարուած մարդ իհարկէ կը համաձայնի հետեւեալ եզրակա-
ցութեան հետ, որ միաձայն ընդունուեց յիշեալ ընկերութեան
կողմից և ուղարկուեց դ-ր Էլլիոտսոնին.

«Բնաւորութիւնը, որը դ-ր Էլլիոտսոնը որոշել է, հիմնուե-
լով գանգի ուսումնասիրութեան վրայ, այնպիսի ճշտութեամբ
համապատասխանում է մարդու իսկական պատմութեանը, որ
անհնարին է նոյնիսկ մտքով անցնել, թէ այդ առաջացել է հան-
գամանքների որևէ պատահական զուգահիշութիւնից: Աւելի
շուտով այս դէպքը մի այնպիսի օրինակ է, որը եթէ հաստա-
տուի նոյն տեսակ ուրիշ վկայութիւններով, կարող է իբրև ա-
պացոյց ծառայել յօգուտ գանգաբանութեան ճշմարտութեանը:

Այնտեղ, ուր նկարագրուած է վերև յիշուած փորձը, հա-
չիւ է տրուում և մի այլ, նոյնչափ կարևոր փորձի մասին 1826.
թ. գարնանը նաւատորմի բժիշկ դ-ր Տոմսոնը պատէր էր
ստացել Եւրեկցիւն 147. քրէական յանցաւորներին մինչև պատ-
ժատեղին—Նոր Հարաւային Վալլիսը (Աւստրալիա): Դոկտորի
ընկերներից մէկը խնդրեց նրան, որ թոյլ տայ գանգաբան միս-
տեր Դէ-Վիլլին քննել թոյր արքորականներին և յանձնել
բժշկին մի յիշատակարան, որի դիտողութիւնները սա կարո-
ղանաւ ստուգել երկարատե ճանապարհորդութեան միջոցին և

տուած բնորոշումները համեմատել մարդկանց իսկական բնա-
ւորութիւնների հետ Այդպէս էլ արին. առաւել մէկը յատկապէս
նկատուած էր, որպէս շատ վտանգաւոր մարդ թէ իր եռան-
դով, դաժանութեամբ և դաւադրութիւններ կազմելու արտա-
կարգ ձեռքերով և թէ անսահման կեղծաւորութեամբ և ծածկա-
մըտութեամբ: Ճանապարհորդութիւնը տեղեց չորս ամիս, և բժիշ-
կը ամբողջ ժամանակ կանոնաւոր կերպով գրում էր պաշտո-
նական օրագրի մէջ իր բոլոր նկատողութիւնները յանցաւոր-
ների մասին: Այդ նկատողութիւնների ծուծը նա բերել է ծա-
նոթին ուղղուած մի նամակի մէջ, որը գրուած է Սիդնէյից,
1826. հոկտ. 9-ին.

«Պէտք է շնորհակալութիւն յայտնեմ ձեզ,—գրում է նա,—
որ ծանոթացրիք ինձ Դէ-Վիլլի և գանգաբանութեան հետ, որը.
ինչպէս այժմ համոզուած եմ, ճշմարիտ հիմունքներ ունի, և
խնդրում եմ ձեզ, նեղութիւն քաշէ՞ք՝ մոէք դ-ր Բորնէտտի մօտ,
որին ես խնդրել եմ ցոյց տալ ձեզ իմ «Օրագրեր», որտեղ կը
գտնէք միստեր Դէ-Վիլլի և իմ նկատողութիւնները յանցաւոր-
ների վարքի մասին ճանապարհորդութեան ժամանակ: Դէ-Վիլ-
լը իրաւացի դուրս եկաւ բոլոր դէպքերում, բացի մէկից—
Թոմաս Ջոնսից. այս մարդը ոչ գրել, ոչ կարդալ գիտէ և պարագ-
մունքով նաւաստի լինելով, մասնակցեց դաւադրութեանը, որի
նպատակն էր ապստամբեցնել ամենքին, գրաւել նաւը
և ուղևորուել հարաւային Աֆրիկէ, ուր, նրանց առաջ-
նորդը՝ Հիւզսի հաւատացնելով, նա՝ Ջոնսը, լիակատար ա-
զատութիւն պիտի ստանար: Նկատեցէք, հրշափ ուղիղ էր իմա-
ցել Դէ-Վիլլը Հիւզսի բնաւորութիւնը, և ես ամբողջ կեանքումս
շնորհակալ կը լինեմ Դէ-Վիլլից նրա տուած բնորոշումների հա-
մար, որոնք ինձ հնարաւորութիւն տուին արգելանոցի մէջ
փակել դժգոհներին և այդպիսով այստեղ հասնել առանց մի-
նդունի, առանց մէկ մարդ կորցնելու. այդ բնորոշումները չը
լինէին՝ շատ հաւանական է բանը այլ կերպ վերջանար: Այս-
տեղի բոլոր իշխանաւորները դառել են գանգաբաններ, և ես ոչ
մի կերպ չեմ կարողանում դուրս պրծեցնել նրանց դիւանատներից
իմ սեփական օրագիրը, մինչև որ նրանք մանրամասնաբար չ'ու-
սումնասիրեն Դէ-Վիլլի բնորոշումները:—Այստեղ կարելի է մէկ
դէպք ևս մէջ բերել: Կոմքը նկատողութիւն էր գրել արքեպիս-
կոպոս Վէյալիի գրքի մասին: Այս բանը մասնաւոր, թղթակցու-
թիւն առաջացրեց նրանց մէջ, և արքեպիսկոպոսը ուղարկեց
նրան իր գլխի կաղապարը, խնդրելով որ անաչառ կերպով
յայտնէ իր կարծիքը: Արքեպիսկոպոսը սաստիկ զարմացած մը-
նաց՝ բնորոշումը ստանալով, բայց, փորձը աւելի լիակատար

անելու համար, նա խնդրեց Կոմբին ուղարկել նոյն կաղապարը որնէ ուրիշ գանգաբանին առանց յայտնելու թէ ո՛ւմ գլխի կաղապարն է, և յետոյ հաղորդել իրան հետևանքի մասին: Կոմբը այդպէս էլ արեց: Նրկորդ գանգաբանից ստացուած կարծիքը ցոյց տուին արքեպիսկոպոսի երկու ամենամօտիկ բարեկամներին, և սրանք ապշեցին, թէ սրպիսի ճշտութեամբ էր որոշուած նրա բնավորութիւնը, և յայտարարեցին, որ, բացի մանր-մանր գծերից, այդ բնորոշումը կարօտ չէ որնէ սրբագրութեան: Նոյն կաղապարը ուղարկեցին երրորդ գանգաբանին, և արքեպիսկոպոսը, խօսելով վերջին երկու կարծիքների մասին, մատնացոյց է անում իր անձնական կեանքին վերաբերեալ հետեւեալ երկու մանրամասնութիւնների վրայ. «Մի բան, որ մանաւանդ ապշեցրել է ինձ այդ կարծիքների մէջ—այդ այն է, որ մէկը ասում է, թէ ինձ համար դժուար է մերժել որնէ բարեխօսութիւն, իսկ միւսը թէ ես սիրում եմ մանկական դպրոցը: Առաջին գիծը իհարկէ լաւ եմ տեսնում ես ինքս իմ մէջ, բայց ինձ թւում է, որ այդ գիծը կարելի չէ նշկատել իմ արտաքին վարմունքից»:

Այժմ համառօտակի կը պատմեմ սեփական փորձերիս մասին: Իմ գանգաբանական բնորոշումների ճշտութիւնը հաստատեց իմ մէջ հաւատ, որ գանգաբանութիւնը ճշմարիտ և կարեւոր գիտութիւն է,—հաւատը, որին հասայ Զօրջի և Անդրէաս Կոմբի աշխատութիւնները ուսումնասիրելով: Երբ ես 23 կամ 24 տարեկան հասակում ապրում էի Նիտում, Գլամոնգանչիրում, այնտեղ քննեցին իմ գլուխը երկու գանգաբաններ, որոնք ժամանակ առ ժամանակ այցելում էին մեր քաղաքը: Քանի որ լիակատար բնորոշում ստանալու համար մեծ վճար է նշանակուած, ես վերցրի միայն համառօտը, որի մէջ հետեւապէս պահատում էին բազմաթիւ մանրամասնութիւններ: Ամենը, ինչ որ այնտեղ ասուած էր, ճշմարիտ դուրս եկաւ, իսկ թէ սրչափ, ցոյց են տալիս հետեւեալ հատուածներն այդ նկարագրից:

1) Երբ ամենամեծ ուշադրութեամբ կը վերաբերուէք փաստերին, և հէնց որ ձեռք կը բերէք նրանց, կ'աշխատէք դատել և դրական եզրակացութիւններ հանել նրանցից: 2) Երբ լաւ հաշտարար և գերազանց մատեմատիկոս կը լինէք և շատ կարգ ու կանոն կը սիրէք ձեր բոլոր գործերի ու պարապմունքների մէջ: 3) Երբ բնականաչափ հաստատաբիտ էք, երբ ձեզ իրաւացի էք համարում, բայց ձեզ պակասում է ինքնազստահութիւնը:

Սրանք են գլխաւոր կէտերը ամենապակասաւոր և քիչ աջող որոշումներին հանած. միակ սխալն այստեղ այն է, որ իմ

մաթեմատիկական ընդունակութիւնները խիստ սահմանափակ են, ինչպէս ցոյց է տալիս մի ուրիշ, աւելի լաւ բնորոշումը, որից հանում եմ հետեւեալ կէտերը. 4) Սյոս պարոնը պէտք է ամեն բան շուտով սովորելիս և յիշելիս լինի, չը նայելով որ շատ չափաւոր քառական յիշողութիւն ունի: 5) Սրա մէջ կայ քիչ-շատ սնտփառութիւն, բայց աւելի շատ ինքնասիրութիւն, Տեղըն եկած ժամանակ ցոյց է տալիս ինքնավստահութեան պակասութիւն. ընդհանուրի կարծիքը, ընդհակառակը, կարող է սրբան վերադրել չափազանց շատ ինքնավստահութիւն, բայց այս կարծիքը սխալ կը լինէր (սա ինքն գիտէ, որ ինքնավստահութիւնը իրան պակասում է): 6) Վեթէ սրա սրամտութիւնը աւելի լինէր, սա լաւ մաթեմատիկոս կը լինէր, իսկ առանց այդ՝ սրա մաթեմատիկական ընդունակութիւնները ես չէի անուանի առաջնակարգ: 7) Սա ունի մի որոշ սէր դէպի կրաժշտութիւնը, որովհետեւ իդէալասէր է, բայց ես չեմ գտնում սրա մէջ լաւ լսողութիւն կամ բաւականին զարգացած երաժշտական տակտ: 8) Սա սիրում է պատճառաբանել, և դիւրին չէ սրան համոզմունքը փոխել տալ:

1. և 8. կէտերը, որպէս և մեծ իդէալասիրութիւնն և խորհրդասիրութիւնը (որը նոյնպէս գտել են իմ մէջ երկու գանգաբաններ), ներշնչելով ինձ օստտիկ սէր դէպի բնութեան գեղեցկութիւնն ու գաղտնիքները, ճիշտ բացատրութիւն են կազմում իմ բոլոր աշխատութիւնների և շարադրութիւնների համար: 2. և 6. կէտերը չափազանց խրատական են, որովհետեւ զարմանալի ճիշտ որոշում են իմ յատուկ ընդունակութիւնը: Դպրոցում ես բաւական լաւ էի սովորում Թւաբանութիւնից և տարրական հանրահաշիւից և պարապում էի նրանցով ամենայն սիրով. բայց ես թողի դպրոցը 14 տարեկան հասակում և իհարկէ՝ մաթեմատիկայից չէի կարող հեռու առաջ գնալ: Սակայն աւելի ուշ, երբ արդէն չափահաս էի, ես երկու տարի անդլիերէնի և գծագրութեան ուսուցիչ էի Լէյչեստերեան դպրոցում, որի տեսուչը կէմբրիջի համալսարանը առաջնակարգ վկայականով աւարտած մարդ էր. սա սիրալիք կերպով առաջարկեց աջակցել ինձ բարձրագոյն մաթեմատիկա ուսումնասիրելու մէջ: Ես աջողութեամբ անցայ բարձրագոյն հաւասարութիւններն և եռանկիւնաչափութիւնը, տարրեւրական (գիֆերենցիալ) Թւահաշիւը Էւրացրի արդէն մեծ գծուարութեամբ, իսկ ինտրեզրալների (ամբողջական Թւահաշիւ) վրայ ուղղակի տանջուեցի, քանի որ բնածին ընդունակութիւն չ'ունէի ներշնչմամբ նմանութիւն և տարբերութիւն նշմարելու գաղափարների, բաների և բանաձևերի մէջ—մի խօսքով, չ'ունէի այն, ինչ որ

գանգաբանները պարզապէս ւարամտութիւնն են կոչում, իսկ ուրիշները—ւանալոգիայի (համանմանացման) գործարանը:

Եւ ճշմարիտ որ ընդունակութիւնն չ'ունեմ սրախօսութիւն անելու կամ բառերով խաղալու, ընդունակութիւնն չ'ունեմ արագութեամբ դրութիւնը որոշելու շահմատ խաղի մէջ, թէև հազիւ թէ մէկ ուրիշը կարողանայ ինձնից աւելի զուարճանալ այդ խաղի բազմափոփոխ ընթացքով: Աչքի ընկնող մաթեմատիկոսների մեծագոյն մասը կամ սրամիտ են կամ բնութիւնից բանաստեղծ են. Ռանկինը, Կլիֆֆորդը, Մորգանը, Կլեր-Մաքսվելը և Սիլվեստրը կարող են՝ այս երևոյթի լաւ օրինակներ լինել: Բայց այն, որ գանգաբանը կարողացաւ գտնել բարձրագոյն մաթեմատիկային ընդունակութեանս պակասութիւնը և կապել դրան այդ գործարանի պակասաւոր զարգացման հետ իմ մէջ,—այդ միշտ երևացել է ինձ շատ և շատ նշանաւոր բան:

3. և 5. կէտերը—երկուսն էլ վկայում են, որ ինձ պակասում է ինքնավստահութիւն, իսկ նրանցից երկրորդը յատկապէս ասում է, որ ես չափազանց խստապահանջ եմ իմ նկատմամբ: Այդ կատարելապէս ճշմարիտ է: Երիտասարդ ժամանակ ես հիւանդութեան չափ երկչոտ էի և ուղղակի վախենում էի մէկի մօտ առանց հրաւերի գնալուց: Երբ քնաւում էի Պարուս, 1848 թ., ինձ նոյնիսկ մեղադրում էին, թէ ես չափազանց գոռոզամիտ եմ և չեմ կամենում բարեկամութիւն անել մարդկանց հետ, սիրտս ցաւում էր, երբ լսում էի այդ խօսքերը: Իմ ամբողջ կեանքիս մէջ ես չեմ կարողացել մօտիկ, մտերմական յարաբերութիւնների մէջ մտնել մարդկանց հետ, բացի այն անձնաւորութիւններից, որոնց բնաւորութիւնը այնպէս է, որ նրանք յանկարծ գրաւում են իմ համակրանքը, և նրանց հետ ես ինձ զգում եմ կարծես իմ տանը: Այս պատճառով կեանքիս մէջ աւելի քիչ մտերիմ ընկերներ եմ ունեցել, քան թէ ուրիշներից շատ-շատերը, և այս ամենը առաջանում է ինքնավստահութեան զգացմունքի իմ մէջ քիչ զարգացած լինելուց:

4. կէտը ցոյց է տալիս, որ բառական յիշողութիւնս թոյլ է չնորհիւ լեզուական գործարանին քիչ զարգացած լինելուն: Այս պատճառով օտար լեզուներ սովորելը ինձ համար չափազանց դժուար է. այս պակասութիւնը խանգարում է ինձ աջողութիւն ունենալու և որպէս հրապարակախօս—հոգեբան թէև ես լաւ եմ իմանում, թէ ինչպիսի գաղափար կամ ինչպիսի ապացոյց պիտի զարգացնեմ, բայց մտքի պատշաճաւոր արտայայտութեան համար հարկաւոր բառերը արագ գտնել—չեմ կա-

բողանում, իսկ մարդո երբ ճիշ է թափում բառեր գտնելու, կորցնում է մտքերի տրամաբանական թելը:

Վերջապէս 7. կէտը պարզաբանում է իմ խելքի իսկական բնաւորութիւնը երաժշտութեան նկատմամբ: Ամենազետեմ և սրտաշարժ երաժշտութիւնը սաստիկ է ազդում ինձ վրայ, բայց ես չեմ կարողանում նկատել նոյնիսկ խոշոր սիալները նուագածութեան մէջ, լսելիքս մեծ թերութիւններ ունի, իսկ քանի որ լաւ չեմ ըմբռնում երաժշտական կանոնաւոր չափը, այս պակասութիւնը կարող է միայն մեծացնել իմ լսելիքի թերութիւնները:

Կան մի քանի ուրիշ բնորոշումներ իմ ներքին բնութեան, որոնք կատարելապէս ճիշտ են գուրս եկել, բայց նրանց մասին խօսել այստեղ անտեղի է: Այս վերջիններս, իմ բնաւորութեան վերե յիշուած պարզ որոշումների հետ, այնպիսի մեծ տպաւորութիւն գործեցին ինձ վրայ, բարձրացնելով իմ աչքում գանգաբանութեան, նշանակութիւնը, որ այդ տպաւորութիւնը չը կարողացաւ անհետանալ ամբողջ կեանքիս մէջ:

Բնաւորութեան գաղտնի աղբիւրները որոշելու գործում գանգաբանութեան ունեցած նշանակութիւնն ու արժէքը ապացուցւում է վերե բերուած փաստերով, բայց այս վկայութիւնների շարքը կարելի է ընդարձակել ևս: Երբ կամ քսան անգամ, մէջ բերելով միայն յայտնի, աչքը զարնող դէպքերը, ըսկած ներկայ հարիւրամեակի առաջին տարիներից: Ժամանակին այդ դէպքերը այնպիսի մեծ տպաւորութիւն էին գործում հասարակութեան վրայ, որը մինչև այսօր էլ չէ անհետացել: Տեսնենք այժմ ինչպէս և ինչու էր գանգաբանութիւնը մերժուած, մի կողմ նետուած:

Առաջին խոշոր արգելքը, որ թոյլ չէր տալիս նրա ճշմարտութիւնը ճանաչելու, կրօնական բնաւորութիւն կրող առարկութիւնն էր: Շոտլանդիայի և Անգլիայի ուղղահաւատ հոգևորականութիւնը ասում էր, թէ նա հակասում է Ս. Գրքին և վնասակար է բարոյականութեան համար: Այս հակառակորդները իհարկէ չեն էլ մտածել նեղութիւն կրել այդ առարկան ուսումնասիրելու, չեն էլ մտածել նոյնիսկ լաւ հաւաստիանալ, թէ ինչ բան է գանգաբանութիւն ասուած ռուսները: Նրանք առանց այլևայլութեան վճռեցին, որ դա պիտի լինի մի հակակրօնական բան և պրծաւ դնաց, իսկ աշխարհականներն էլ մեծ մասամբ հեռեցին նրանց:

Հակառակորդների միւս խումբը կաշմում էին բնագանցահանները (մետաֆիզիկները): Վիլիամ Համիլտոնին պարագլուխ ունենալով: Այս փիլիսոփաները, ինչպէս սրանք իրանց անուա-

նում են, վաղուց սովորել են խելքը ուսումնասիրել դիտելով սեփական ինքնագիրտակցութիւնը և ուրիշների մտաւոր արտայայտութիւնները,—վերջիններս միայն այն չափով որ չափով որ իրանք կարող էին ակններն նշմարել սրանց։ Նրանք ոչ մի կապակցութիւն չէին ճանաչում մտաւոր ընդունակութիւնների և մարմնի մէջ, և մինչդեռ գանգաբանները պնդում էին, թէ երանք ոչ միայն ապացուցել են այդ կապակցութեան գոյութիւնը, այլ և որովհետեւ են նաև գլխի ուղեղի այն զանազան մասերը, որոնք յատուկ ընդունակութիւնների գործարաններ են —այս ընդունակութիւններից շատերը բոլորովին չեն էլ ճանաչւում բնազանցականների կողմից,—այդ հակառակորդները ամբողջ գիտութիւնը կեղծ հրատարակեցին, իսկ նրա ականաւոր ներկայացուցիչներին՝ տգէտ ֆանատիկոսներ։ Եւ մինչոյն ժամանակ նրանք էլ երբէք չեն բարեհաճել անձամբ հետազոտելու և ուսումնասիրելու այդ գիտութիւնը, այլ բոլորովին անտես էին անում այն բազմաթիւ փաստերն և ամեն տեսակ վկայութիւնները, որոնք հաւաքուած էին այդ գիտութեան ճշմարտութիւնը հաստատելու համար։

Հակառակորդների երրորդ խումբը կազմում են բժիշկներն ու բնախօսները։ Սկզբում նրանցից մի բաւականին ստուար մաս, որը այցելում էր Գալլի, Շպլերցհէյմի և Կոմբի դասախօսութիւններին, դարձել էր նոր գիտութեան մոլեռանդ տաւրածիչներ։ Եւ իրաւի, որչափ ինձ յայտնի է, այն բժիշկներն ու անձնաւորութիւնները, որոնք լսելով նախօրօք դասախօսութիւնների ամբողջ ընթացքը, յետոյ ինքնուրոյն կերպով զբաղուել են ձեռք բերած տեղեկութիւնների վերաստուգելով, անկեղծ ցանկութիւն ունենալով ճշմարտութիւնը գտնելու,—բոլորն էլ դառել են համոզուած գանգաբաններ։ Այսպիսով գանգաբանութիւնը առաջագիմում էր մտաւորապէս մինչև 1840 կամ 1845 թւականը, և այն ժամանակ կարծես պատճառ էլ չը կար, թէ ինչու նա չը պիտի իր տեղը բռնէր ուրիշ ճանաչուած գիտութիւնների շարքում, քանի որ ճանաչուած էր այնպիսի մարդկանց կողմից, ինչպէս են թագուհու բժիշկ Ջէյմս Կլարկէ, Ջոն Ֆորբէս, դ-ր Էլլիոտսոնը, դ-ր Վիլհամ Գրեգորին, դ-ր Ինգլիշը, Գրանվելեան հիւանդանոցի բժիշկ դ-ր Կանոլլի, բարձրագոյն վերաբուժական դպրոցի կազմախօսութեան և վերաբուժութեան պրոֆեսսոր դ-ր Աբերնետի և շատ ուրիշները։ Սակայն շուտով այս չըջանից յետոյ սկսուեց գանգաբանութեան անկումը։ Իսկ որովհետև այս անկումը առաջացնող պատճառները, թւում է ինձ, դեռ երբէք պարզ որոշ մատնացոյց արուած

չեն եղել, ուստի ես այստեղ կը լուսաբանեմ նրանց ևայն, թէ ինչպէս են ազդել, իմ կարծիքով, այդ պատճառները:

Ըստ երևութին երկու գլխաւոր պատճառներ կային, որոնք թերահաւատութիւն սերմանեցին դէպի գանգաբանութիւնը.

1) չրջիկ դասախօս-գանգաբանների բազմանալը, որոնցից մեծագոյն մասը անուս մարդիկ էին, իսկ երբեմն նոյնիսկ բոլորովին անգէտ այն բանից, ինչ որ յանձն էին առնում դասախօսել, և 2) գանգաբանութեան շիոթելը մեամերիսմի և հիպոհոտիսմի հետ, որոնց դէմ այն ժամանակ աւելի ևս կատաղի կռիւ էր յայտարարուած:

1) Թէև գանգաբանութիւնը նրանից, ով որ կամենում է լիովին հասկանալ այս ուսմունքը և օգտուել նրանից բնաւորութիւնները ճիշտ որոշելու նպատակով—պահանջում է անխնջ աշխատանք և երկարատև փորձառութիւն, սակայն վերևանց և թեթև նայողի աչքին նա շատ հեշտ գիտութիւն կարող է երևալ, որովհետև իսկ որ պատահում են քացառիկ, իրնէ օժտուած մարդիկ, որոնք աջողութեամբ պարագլում են նրանով: Այսպիսի հայեաքքի հետևանքն էր այն, որ այս գիտութիւնը բազմութիւ շատ ընդունակ հրապարակական դասախօսների կողքին ունեցաւ և ուրիշ այնպիսի դասախօսներ, որոնք յանձն են առնում դասախօսել և գլուխները զննել՝ բաւականաչափ դիտնական նախապարաստութիւնից զուրկ լինելով: Ահա հէնց այս մարդիկն էին, որ չը գիտենալով ուղեղի կազմութիւնն ու պատշտոնները, չ'իմանալով որոշել գործարանների համեմատական չափերը, անընդունակ լինելով ընդգրկելու գործարանների դասազան խմբակցութիւնների բարդ հետևանքները, գործարանների, որոնց զարգացման վրայ ազդում են թէ տեսպերամենտը, թէ կրթութիւնը և թէ հասարակական դիրքը,—այդ մարդիկն էին, որ իրանց անխուսափելի սխալներով միայն խորտակում էին հասարակութեան հաւատը դէպի առարկան, մանաւանդ որ այդ հասարակութիւնն և գանգաբանութեան դիտաւորեալ հակառակորդները չէին կարողանում կամ չէին ուզում չըջանկատ գիտնականին զանազանել չարլատանից և այդ պատճառով բարձրաձայն հրատարակում էին, որ գանգաբանների սխալները պարզ ապացոյց են նրանց ամբողջ գիտութեան անհիմն լինելուն: Ի նկատի առնելով հակառակութեան և վատ համբաւի բոլոր այս սկզբնապատճառները և այն թերահաւատութիւնը, որով ճանաչուած գիտութիւնները, պարագամունքներն ու պաշտօնական աշխարհը սովորաբար ընդունում են ամեն նորութիւն,—ուր մի գարմանալի բան չը կայ, որ երբ բոլորովին անցաւ առաջին հետազօտողների և հետախոյզների

ողևորութիւնը, չը գտնուեցին նոր, բաւականին ձեռնահաս, անկախ գիտնականներ, որոնք բռնէին նրանց տեղը:

2) Հէնց այն ժամանակ, երբ գանգաբանութիւնը սկսել էր ընդհանուրից ճանաչուել, մեծանշան տրանսի (շղային պապանձման, կարկամութեան, կամ ուշաքարձութեան) միջոցին կատարուած անցաւ օպերացիաները ամենակատաղի հակառակութիւն յարուցին իրանց դէմ նոյնիսկ բժիշկների կողմից:*) Դ-ր Ջոն Էլլիոտսոնը, — Բժշկական և Վիրաբուժական ընկերութեան նախագահը, Լոնդոնի համալսարանի պրոֆեսորը, որ դապախօսութիւններ էր կարդում Սենտ-Թոմասի հիւանդանոցում, — գանգաբանութեան նախանձախնդիր կողմնակիցն ու գանգաբանական ընկերութեան հիմնադիրը, — գլխաւոր պաշտպանը հանդիսացաւ այս անցաւ օպերացիաների, և հէնց այն բանի համար, որ այդ օպերացիաները պաշտպանում և կատարում էր, զրկուեց ուսուցչապետական ամբիոնից: Ինչ որ վերաբերում է հիպնոտիսմին, այժմ ամենքին յայտնի է, որ Էլլիոտսոնը իրաւացի էր, իսկ նրա հակառակորդներն ու նախատողները՝ կանխակալ կարծիքներով պաշարուած մարդիկ, ինչպէս որ ցոյց կը տամ յաջորդ գլխի մէջ: Հիպնոտիսմի դէմ եղած նախապաշտովունքները վատ ազդեցին դէպի գանգաբանութիւնը եղած վերաբերմունքի վրայ էլ: Այդ նախապաշարմունքները միացան աստուածաբանների և բնագիտականների կանխակալ կարծիքների հետ, նոյնպէս թերուս դամախօսների և անպատրաստ պրոֆեսորների առաջացրած նախապաշարմունքների հետ ու խանգարեցին նոր գիտութեան պաշտօնագէտ ճանաչուելուն, իսկ այս հանգամանքը, իր կողմից, արգելք հանդիսացաւ, որպէսզի բժշկութիւն ուսումնասիրողները դառ-

*) Մեծեր բժիշկը (1734—1815) հիմնեց Վենդանական մագնիսականութիւն կամ մեծերիմա գիտութիւնը և մեծ աշուղթեամբ բժշկում էր Վեննայում և Պարիզում: Այս գիտութիւնն առում է, որ մարդու մէջ կայ առանձին «մագնիսական» ոյժ: Մարդը կարող է այդ ոյժը ուրիշին տալ և այդպիսով ազդել ուրիշի վրայ, ներշնչել գաղափարներ, զգացմունքներ, ցանկութիւններ, բժշկել, ջարդանել, պապանձացնել ևս: ևս:

Գիտութեան ներկայացուցիչները երկուր ժամանակ միայն շարլատանութիւն էին համարում այս ուսմունքը, բայց նորագոյն հետազոտութիւնները, հիպնոտիսմը, ներազդումները և նեարգային ոյժի գոնազան երևոյթները ցոյց տուին, որ Մեծերի բժշկական եղանակի մէջ ոչ մի խորհրդաւոր բան չը կար, և այժմ Վենդանական մագնիսականութիւնն ամբողջով յաճախ գործ է ածուած գիտութեան մէջ, թէև այդ երևոյթների էութիւնը բաւականաչափ պարզուած չէ:

նան նախանձախնդիր գանգաբաններ առանց իրանց մասնագիտական եկամուտներին շեղանելու:

Այս բարդ ազդեցութիւնները այն տեղը հասցրին, որ գանգաբանութիւնը սկսեցին պարզապէս խաբեբայութիւն համարել, իսկ այդ առարկայի հետ անծանօթ լինելը մեր հարիւրամեակի վերջին կիսի բնախօսների և բժիշկների մէջ այնպէս ընդհանրացաւ, որ սկսեցին ասել, իբր թէ դա գիտութիւն չէ, այլ զուտ երևակայական ուսմունք, հիմնադիրների երեւակայութեան պտուղ, որը ոչ գիտողութեամբ, ոչ էլ փորձով չէ հաստատուած: Ո՞ր աստիճան գիտնականները անծանօթ էին այն բանի հետ, թէ ի՞նչպէս էր Գալլը գտել գանգաբանութիւնը և թէ հրչափ բազմաթիւ՝ դիտողութիւններով և փորձերով ուշի ուշով վերաստուգուած փաստերի վրայ էր սա հաստատուած, — այս բանը երևում է առարկութիւնների անմիտ-տափակ ընաւորութիւնից, առարկութիւնների, որ անուամէին այդ գիտութեան դէմ նոյնիսկ այնպիսի մարդիկ, որոնք, իմ կարծիքով, պէտք է գտնէ կարգացած լինէին գանգաբանութեան հիմնադիրների գորուածքները, նախ քան մերժէին այդ գիտութիւնը: Նոյնիսկ այնպիսի մի ականաւոր բնախօս և զգոյշ մտածող, ինչպէս էր հանգուցեալ պրոֆեսոր Հեքսլին, երբ մէկ անգամ հարցրի նրան, թէ ի՞նչու նա գանգաբանութիւնը գիտութիւն չէ համարում, իսկայն ևեթ պատասխանեց հնձ. «Որովհետեւ գանգի հաստութիւնը փոփոխուում է, և այդպիսով նրա արտաքին ձևերը չեն համապատասխանում ուղիղ ձևերին, հետևապէս ուղեղի զանազան մասերի համեմատական զարգացումը անկարելի է որոշել գանգի ձևից»:

Այս խօսքերին ես պատասխանեցի, որ գանգի հաստութեան մէջ եղած տարբերութիւնները մի քանի տասնորդական դիւմից աւելի չեն, մինչդեռ գլխի ձևի և չափերի մէջ եղած տարբերութիւնները, տրամագիծներով չափուած, ամբողջական դիւմերի են հասնում, այնպէս որ գլխի ծաւալի և համաչափութիւնների վրայ (գանգաբանների գործածած՝ չափելու և հաշուելու եղանակը աչքի առած) գանգի հաստութիւնը շատ աննշան կերպով է ազդում. այնուամենայնիւ գանգաբանները շատ մանրաճնշին ուսումնասիրում են, թէ ինչ կապ ունեն այդ հաստութեան հետ անհատի տեմպերամենտը, հասակն և այլ հանգամանքները և շատ անգամ բաւականին ճիշտ որոշում են այդ հաստութիւնը: Նա համաձայնուեց այս բացատրութեանն ճշմարտութեան հետ և չը կարողացաւ ոչ մի այլ առարկութիւն մէջ բերել, բացի նախ, հասարակ նկատողութիւնից, թէ ինքը միշտ կարծել է, որ գանգաբանութիւնը մերժուած է եղել հիմնաւոր հե-

տաղտութիւններից յետոյ (որոնք իսկապէս տեղի չեն ունեցել)։ և երկրորդ—նշանաւոր հարցից՝ եթէ գանգաբանութիւնը ճշմարիտ գիտութիւն է, ապա ինչիցն է որ նրանով չեն զբաղուել իսկապէս գիտնական համբաւ ունեցող մարդիկ։

Մի ուրիշ աւելի կամ պակաս լուրջ առարկութիւն ուղղուած է մտաւոր կարողութիւնների չափազանց մանրամասն դասակարգութեան և զանազան գործարաններին տուած անունների դէմ։ Բայց այսօրինակ առարկութիւնները կարելի է ուղղել և ուրիշ, ամենահաստատ հիմունքների վրայ դրուած գիտութիւնների դէմ, օրինակ, երկրաբանութեան դէմ, որտեղ թէ դասակարգութիւնը և թէ անուանակարգութիւնը չարունակ փոփոխուում են, քանի աւելի են աշխատում մօտենալ բնութեան փաստերին։ Գանգաբանութիւնը—առաւելապէս դիտողական գիտութիւն է, այնչափ, որչափ որ և երկրաբանութիւնը։ Նրա ուսումնասիրութիւնը վերին աստիճանի բարդ է և զբոսաբեր։ Թարօրինակ բան կը լինէր, եթէ ննթադէիւնք, որ մի կէտ-դիւթին աչքի ընկնող մարդիկ, որոնք նրան հիմնել են, կարող էին նրա ամբողջ հարուստ բովանդակութիւնն ապառել։ Մտաւոր կարողութիւնների դասակարգութիւնը, կարողութիւնների, որոնց գործունէութիւնը կախուած է, ինչպէս արդէն գրտնուած է, ուղեղի որոշ ծաւալից, հիմնուած է երկարատև դիտողութիւնների և համեմատութիւնների վրայ։ և իհարկէ չարունակ պլտի բարեփոխուի, կատարելագործուի նոր և նոր դիտողութիւնների շնորհիւ։

Բայց, մերժելով գանգաբանութիւնը, ոչ կազմախօսները, ոչ բնախօսները, ոչ էլ մարդաբանները չեն կարողացել ոչ մի այլ դրական միջոց ցոյց տալ մեզ խելքի ու գլխուղեղի մէջ եղած յարաբերութիւնները որոշելու համար։ Ընթարիտ է, ներանք հաւաքել են բազմաթիւ գանգներ, համարադրել են նրանց, մանրաբանին չափել, դասակարգել կարճագլուխների և երկարագլուխների և զանազան ուրիշ տեսակների, բայց ոչ մի բան այնուամենայնիւ այս աշխատութիւնից դուրս չէ եկել, եթէ հաշուելու չը լինէր այն, որ ընդհանուր գծերով որոշուած են զանազան մարդկային ցեղերի գանգերի տիպարային ձևերն ու միջին չափերը, առանց փորձելու այդ տիպարային ձևերը զանազան ցեղերի մտաւոր առանձնայատկութիւնների հետ կապելու։ Ինձ թւում է, որ դեռ երբեք վատնուած չէ եղել այսչափ շատ գիտնական աշխատանք այնչափ անհամեմատ չնչին արդիւնք ստանալու համար։

Բայց ահա մօտ 1870 թւին մայր ցամաքի վրայ մի քանի բնախօսներ, իսկ Անգլիայում պրոֆեսսոր Ֆեռիէ սկսեցին փոր-

ձերի ենթարկել կենդանի անասունների գլխուղեղը Թոյլ գալ-
վանական հոսանքով գրգռում էին այդ կենդանիների գլխուղե-
ղի զանազան մասերի մերկացրած կէտերը և դիտում էին, թէ
ինչ հետևանքներ են առաջանում դրանից: Այս ճանապարհով
գտել են, որ ուղեղի որոշ սահմանափակ մասերի գրգռումից
սղոււմ են որոշ սիստեմների մկանները, որոնք շարժեցնում են
կենդանու ձեռքը, ոտը, իրանը, դէմքը կամ գլուխը: Այս երե-
ւոյթը կոչուեց գլխուղեղի գործունէութեանց կենտրոնացում,
և ժողովրդականացնող հեղինակները իսկոյն յայտարարեցին,
որ այսուհետեւ գանգարանութեանը տրուած է վերջնական և
մահացու հարուած, որովհետեւ փորձերը ցոյց տուին (որպէս
նրանք տգիտութեամբ կարծում էին), որ գլխուղեղի մասերը, ու-
րոնք, զանազանների ասելով, զուտ մտաւոր կարողութիւննե-
րի կենտրոններ են, իրօք միայն մկանների շարժումները ղեկա-
վարող կենտրոններ են հանդիսանում: Այդ հեղինակները բոլո-
րովին աչքաթող են արել այն հանգամանքը, որ գլխուղեղը կարող
է լինել — և իրօք պէտք է լինի — ոչ միայն գաղափարների ծագման
կենտրոն, այլ և մկանների շարժմանց կենտրոն, և որ երբ գալվա-
նիամբ օգնութեամբ կոշտ ու կոպիտ եղանակով գրգռում ենք
կենդանի գլխուղեղը, բնական է որ չեն կարող առաջանալ
զուտ մտաւոր երևոյթները, որոնք, մանաւանդ անասունների
հետ արած փորձերի մէջ, ուրիշ կերպ էլ չեն կարող երևան
գալ, եթէ ոչ միայն իբրև մկանների շարժումներ: Բացի այդ,
չառ հնարաւոր է և նոյնիսկ հաւանական է, որ մինչդեռ գլխու-
ղեղի մակերեսոյթի արտաքին, կամ գորշագոյն նիւթը գա-
ղափարների նստատեղի է, աւելի խօրը գտնուող նիւ-
թը կենտրոն է հանդիսանում մկանների և նեարդների
շարժումների համար և գալվանական հոսանքից գրգռում է
վերին շերտերի հետ միասին: Բայց և այս կապակցութիւնը, որ
գլխուղեղի որոշ մասերն ունեն մկանների շարժմանց հետ,
բոլորովին նոր գիւտ չէ, ինչպէս ըստ երեւոյթին կարծում են
ժամանակակից հեղինակները. այդ բանը վաղուց արդէն յայտ-
նի էր Գալլին, թէ և այն ժամանակ նա չէր էլ կարող ձեռքի
տակ ունենալ բոլոր ժամանակակից միջոցները այս նիւթին
վերաբերեալ բազմակողմանի փորձերն անելու համար: Իր դիւ-
տերի մասին տուած առաջին տեղեկութիւններից մէկի մէջ —
այն է՝ բարոն Ֆոն-Սետցերին ուղղած նամակի մէջ — Գալլը,
խօսելով մարդու և կենդանիների գլխուղեղի պաշտօնների մա-
սին, պնդում է, որ մի ինչ-որ տարօրինակ կապակցութիւն կայ
մկանների և ուղեղային գործարանների մէջ, և աւելացնում է.
«հէնց որ ուղեղային գործարանները որեւէ կերպով գրգռում

են, նրանք, նայելով իրանց բռնած տեղին, անպատճառ կը ստիպեն քեզ այս կամ այն դրութիւնը ընդունելու, կարծես քեզ թելերից քաշելիս լինեն, այնպէս որ ղեկավարող գործարանի տեղը կարելի է դանել նրա առաջացրած շարժումներովն:

Այս շարժումներով բնական է որ արտայայտուում են մըտաւոր զգացողութիւնները (էմոցիաները): Դարվիւնը գեղեցիկ կերպով ուսումնասիրել է զգացողութիւնների այս բնական արտայայտութիւնը, որի աղբիւրը դեռ անցեալ դարի վերջերում Գալլը որոնում էր գլխուղեղի նոյն մասերի մէջ, որտեղ ծագում են նաև զգացողութիւնները: Այս բոլոր փաստերը լաւ ծանօթ էին դանգաբանութեան բոլոր նախկին լրջմիտ կողմնակիցներին: Բրիստոլիի դ-ր Դէվին 1874 թւին յայտնեց Բատի և Բրիստոլի բժշկական միութեանը, որ դեռ 1842 թ. ինքը ներկայ էր գտնուել մի շարք փորձերի, որոնք ամենապիճոական և աներկբայ կերպով ապացուցանում էին, որ մարդկային ուղեղի զանազան մասերի գրգռուելուց միաժամանակ առաջ են գալիս թէ շարժումներն և թէ զգացողութիւնները: Նա աւելացնում է իր խօսքերի վրայ. «Ես պնդում եմ, որ քառասուններեւ տարի սրանից առաջ Հիտցիդը համոզուած էր, որ այդ երեոյթները իսկապէս գոյութիւն ունեն, և բոլորովին ապացուցուած էր համարում այդ: Նոյնը յայտնի էր հանգուցեալ դ-ր Էլլիոտտին, հանգուցեալ Ինգլիզին, Ատկինսոնին, Սայմին և շատ ուրիշներին, որոնց անունները չենք թւի: Այժմ արդէն այնպէս վըտանգաւոր չէ հրապարակով յայտարարել նոր, տարօրինակ և քիչ հասկանալի գիւտերի մասին: Կարելի է յուսալ, որ ներկայ դարը արդէն աւելի ազատամիտ է դառնել, քան թէ այն ժամանակները, որոնց մասին ես խօսում եմ և որոնց ես իմ աչքովս տեսել եմ: Դ-ր Հիտցիդն ու դ-ր Ֆեռիէն առատ հունձ չէին հնձի իրանց փառաւոր աշխատութիւններից, եթէ տրամադրութիւնը այժմ փոխուած չը լինէր դէպի լաւը»:

Պարզ է ուրեմն, որ Ֆեռիէի մատնացոյց արած շարժիչ կենտրոնների կապակցութիւնը դանգաբանական գործարանների հետ, որոնց բնական գործունէութիւնը կարող է արտայայտուել միայն արտաքին շարժումներով, գտնուած է դեռ Գալլի ձևաքով և լաւ յայտնի էր բոլոր նախկին դանգաբաններին: Բայց ժամանակակից հեղինակները, անգէտ լինելով դանգաբանութիւնից, չեն ընդունում այդ կապակցութիւնը: Սակայն որ շարժիչ և զգացողական գործարանների մէջ կապակցութիւն կայ, այս բանը ցոյց տուին Ջէյմս Վեբբի և դ-ր Բերնար Հոլլանդերի փորձերը: Ես կը յիշեմ միայն մի քանի օրինակներ, սկսելով դ-ր Հոլլանդերի բերածներից:

Պրոֆ. Ֆեոդէն գրգռում էր կապիկներին և մի քանի այլ կենդանիների ուղեղի վերելնող ճակատային գալարադէ մի ուրոշ տեղը, և գրանից վեր էին քաշուում կղակն ու բերանի անկիւնները և աչքերը խիւտում Ուղեղի մի որևէ այլ տեղը գրգռելուց այդպիսի երևոյթներ չեն առաջանում։ Այժմ տեսէ՛ք՝ ուրախութեան կամ զուարճութեան արտայայտութիւնը միշտ ըսկաւում է ժպիտով, որի միջոցին բերանի անկիւնները ետ են քաշուում։ Այս բանի մէջ համաձայն են բոլոր ձեռնհաս մարդիկ։ Ընդհանուր կաթում ունեցող խելագարները գրեթէ միշտ լաւատես և շարունակ ուրախ արամադրութեան մէջ են լինում, և հիւանդը իրան երևակայում է հարուստ կամ մեծ մարդ, այս հիւանդութեան առաջին նշանը՝ բերանի անկիւնների և աչքերի արտաքին անկիւնների դողդղալն է։ Այս երկու երևոյթները առաջացնող ուղեղային կենտրոնը իր դիրքով բոլորովին համապատասխանում է դանդաքանական յոյս գործարանին, որի արտաքին արտայայտութիւնը ուրախ արամադրութիւնն է կամ մանաւանդ ուրախ սպասողութիւնը։

Նոյն պրոֆ. Ֆեոդէն գտել է դէմքի մկանների շարժումների կենտրոնը, որը բոլորովին համապատասխանում է գանգաբանական նմանողութիւն գործարանին, միմիկայի այս աղբիւրին, իսկ միմիկայի մէջ դէմքի արտայայտութիւնը ամենակատար ղերն է խաղում։

Գտնուած է այլ ևս մէկ կենտրոն, որը ղեկավարում է լեղուի, ենթայտեայ տողարկների և ծնօտների շարժումները կապիկների մօտ, — շարժումները, որոնք տեղի են ունենում մի բանի համը տեսնելիս ու ծամելիս. ուղեղի այս տեղը կատարելապէս համապատասխանում է գանգաքանական ճաշակ գործարանին, որը ստեղծում է բերանի համը դիտողներ, իսկ սաստիկ զարգացած ժամանակ՝ աչքածակ որկրամոլներ։

Այսպիսի կապակցութեանց ամենազարմանալի օրինակը կարող է լինել կենտրոնացման գործարանը, որը մեզ ընդունակ է դարձնում ուշադրութիւնը երկար ժամանակ մէկ առարկայի վրայ կենտրոնացնելու և որը միաժամանակ գաղափարներ կազմելու տեսողական ընդունակութեան կենտրոնն է։ Դա տեսանելիք գործարանը չէ, — վերջին կենտրոնը ուղեղի մի ուրիշ մասում է տեղաւորուած, — ոչ, դա մի առանձին ընդունակութեան գործարան է, որի շնորհիւ մենք տեսնում ենք և մեր ուշադրութիւնը դարձնում ենք մէկ որոշ առարկայի վրայ։ Այս ընդունակութեան արտաքին արտայայտութիւնն է անթարթ ուղղուած հայեացքը, իսկ որովհետև տեսողութիւնը կարևոր ֆիզիկական զգայարաններից մէկն է, որի օգնութեամբ ծանօ-

Թանուս եւք արտաքին աշխարհի հետ, ուստի՝ ուշադրութիւնը կենտրոնացնելու ընդունակութիւնը պիտի նախ և առաջ զարդանար տեսողութեան սահմաններում, և այդպիսով անթարթ հայեացքը նշան դառաւ որեւէ մէկ առարկայի շուրջը պտտող երկարատև մտքի, մինչև անգամ այն դէպքում, երբ առարկան աչքի առաջ չէ կամ բոլորովին վերացական է:

Այնուհետեւ, կարելի է ցոյց տալ մէկ կապակցութիւն, որը նկատելի է դ-ր Հոլլանդերը, այն է՝ որ բարկութիւն ցոյց տուող շարժումների կենտրոնը համապատասխանում է գանդաբանական կործանութիւն գործարանին: Այս գործարանի գրգռումը ըստիպում է չաղկալին ականջները ետ մղել ու ցատկել, կատուին—բերանը բանալ, մաղերը փաթաղել և պոչը զարկել,—այս ամենը բարկութեան պարզ նշաններ են: Այսպիսով «կործանութիւնը» (գուցէ այս բառը և անաշուղ տեւումին է) նշանակում է ուղղակի բարկութեան կամ ցասման գործարան. իսկ անսանձ բարկացած երեխան կամ չափահաս մարդը սովորաբար վնաս է պատճառում իրան վերաւորող առարկային կամ բոլորովին նրան ոչնչացնում է և կործանում է, երեխան ծեծում, փչում է այն առարկան, որը նրան ցաւ է պատճառել կամ նրա բարկութիւնը գրգռել է, իսկ բռնակալը տանջում, սպանում է իրան զայրացնողներին:

Միստեր Վերբը մատնացոյց է անում մի քանի ուրիշ գործարանների վրայ, որոնք նոյնպէս շատ ու շատ հետաքրքրական են: Եթէ գրգռելու լինենք կապկի՝ դ-ր Ֆեռիէի ցոյց տուած կենտրոններից մէկը (№ 1), կենդանին ձգում է ոտները: Այս գործարանը այն տեղն է բռնում, որը համապատասխանում է գանդաբանական հաստատամտութիւն և ինքնապատուութիւն գործարաններին, որոնց արտաքին արտայայտութիւններից մէկն է ոտների ձգելը կամ վճռական կերպով թափ տալը—վերջին գործողութիւնը նոյնիսկ առած է դառել, որպէս սաստիկ յամառութեան նշան: Մի ուրիշ կենտրոնի գրգռումը (№ 12) ստիպում է «երեխաներին ուղղուել, լայն չուլ աչքերը և գլուխը շուռ տալ միւս կողմը»: Այս կենտրոնը համապատասխանում է գանդաբանական զարմանք կամ հրաշք գործարանին, և ոչ մի ուրիշ շարժում չէ կարող այնպէս լաւ արտայայտել զարմանքը, որպէս վերև նկարագրուածները: Աւելի հետաքրքրական հետեւանք է ստացւում փոքր ծոծրակային դալարաղծի ստորին մասի գրգռումից կովերի և ոչխարների մօտ. այդ գրգռումը առաջ է բերում նրանց մէջ ետևի ոտների և պոչի անհանգիստ շարժումներ, և միևնոյն ժամանակ կենդանիները նայում են ետևի ոտներից մէկի վրայ և ժամանակ առ

ժամանակ ողբալի ձայներ են արձակում, կարծես թախիժ կամ կարօտ յայտնելիս լինեն։ «Այդ գրգռուած մասը գանգաբանական զաւակասիրութիւն գործարանն է ներկայացնում, և ուր որ առիթ է ունեցել դիտելու կովին, երբ նրանից հեռացնում են հորթը, պիտի խոստովանուի, որ ճիշտ այդպիսի շարժումներով է նա արտայայտում իր զգացմունքները։

Այն ամենից յետոյ, ինչ որ վերև ասուած էր, «շարժիչ կենտրոններն» մերձաւոր կապակցութիւնը գանգաբանական գործարանների հետ (որոնց գրգռումից գործողութիւններ և շարժումներ են առաջ գալիս) շատ նշանաւոր փաստ է և նոր գերազանց միջոց է ստուգելու, թէ սրպիսի գարմանալի ճշտութեամբ գանգաբանները ցոյց էին տալիս գլխուղեղի այն կենտրոնների տեղերը, որոնք ղեկավարում են զանազան մտաւոր ընդունակութիւնները։ Քանի որ արդէն գտնուած շարժիչ կենտրոնների մեծագոյն մասը միայն հաստատում է գանգաբանների եզրակացութիւնները, բնականօրէն կարող ենք ենթադրել, որ և մնացած գանգաբանական գործարանների մեծ մասը նոյնպէս ճիշտ է որոշուած, մանաւանդ որ այդ գործարանների այս կամ այն զարգացումը որեւէ ազդի կամ ցեղի մէջ բոլորովին համապատասխանում է ազգային և ցեղական բնաւորութեանը և կարող է նոյնիսկ բացատրել այս բնաւորութիւնը, մի բան, որ ոչ բնախօսները, ոչ էլ մարդաբանները չեն էլ փորձել անել։ Իսկ ինչ վերաբերում է առանձին մարդկանց բնաւորութեան որոշմանը, փորձուած գանգաբանները արդէն ցոյց են տուել, որ իրանք կարող են այդտեղ էլ կարգաւ, որպէս բաց գրքի մէջ, և երևան հանել վարմունքների ծածկած աղբիւրները մի այնպիսի ճշտութեամբ, որով յաճախ չեն կարողանում այդ մարդկանց բնորոշել նրանց ամենամտերիմ բարեկամները։ Եւ այնուամենայնիւ նոյնիսկ այժմ հէնց իրանք՝ գլխուղեղի ուսումնասիրութեան նոր և դեռևս անմշակ եղանակի պաշտպանները շարունակում են հին և մութ առարկութիւնները կրկնել գանգաբանութեան դէմ, կարծես այդ առարկութիւնները անպայման ճշմարիտ և անհերքելի լինէին։

Օրինակ, Մարդաբանական Ընկերութեան նիստում, դ-ր Հոլլանդերի առաջին զեկուցման ընթերցումից յետոյ, պրոֆ. Ֆելդէն, մի քանի հաճոյախօսութիւններ ասելով հեղինակի հասցէին և ոչ մի առարկութիւն չ'անելով նրա բերած փաստերի դէմ, ասել է հետեւալը. «Մենք դեռ չ'ունենք այս դէպքում այնպիսի վկայութիւններ, որոնք հիմնուած լինէին մանրաբանին հետազօտութիւնների վրայ, խիստ գիտնական եղանակներով կատարուած լինէին և ցոյց տային, որ որոշ կապակցութիւն

կայ ուղեղի առանձին կենտրոնների զարգացման և յատուկ մըտաւոր ընդունակութիւնների, հակումների և բնաւորութեան առանձնայատկութիւնների մէջ։ Չեմ կարծում, որ այժմ գոյութիւն ունենային որեւէ վկայութիւններ, որոնց վրայ արժեքարուշադրութիւն դարձնելու—Բայց միթէ Գալլի, Շպլերցհէյմի և Կոմբի հետազոտութիւնները, որոնց նրանք ամբողջ կեանքը նուիրեցին, «մանրաքննին», իսկ նրանց եղանակները՝ «գիտնական» չէին, միթէ նրանց վերջնական եզրակացութիւնները չը հաստատուեցին՝ ամեն տեսութեան ճշմարտութիւնը ապացուցող փորձաքարով—այն է մարդու բնաւորութիւնը ամենայն մանրամասնութեամբ դուշակելու կարողութեամբ։ Արմատացած և դասակարգային նախապաշարմունքները միշտ դժուար են ոչնչանում։ Ըայց այժմ, կասկած չը կայ, արդէն հասել է ժամը, որ դանդաբանութեան անգիտական լինելու անհիմն մեղադրանքը պիտի մի կողմ նետուի, որովետե նա կառուցուած է աւելի գիտական հիմունքների վրայ, քան թէ այն ժամանակակից զպրօքը, որը, վերին աստիճանի անբնական, հետեւապէս և «անգիտական» եղանակով զրգուում է կենդանի անասունների զլխուղեղը և յոյս ունի այդպիսով իմանալու զլխուղեղի զանազան պաշտօնները։

Այս նախապաշարմունքի կուրացնող ազդեցութիւնը այն տեղն է հասցրել, որ ժամանակակից հետախոյզները աչքից բաց են թողել մի չափազանց կարևոր հանգամանք, այն է՝ որ մարմնի զանազան մասերի յաճախ շատ բարդ շարժումները, որոնք առաջանում են զանազան ուղեղային կենտրոնների գրգռումից, — իսկապէս ոչ այլ ինչ են, եթէ ոչ զուտ արտաքին արտայայտութիւն հէնց այն մտաւոր զգացողութիւնների, որոնք վաղուց արդէն վերադարձում էին դանդաբանական գործարաններին, այն գործարաններին, որոնք զլխուղեղի հէնց նոյն մասերում են տեղաւորուած, որտեղ են գտնում և այդ շարժիչ կենտրոնները։ Բացի այդ, շատ խրատական բան է այն, որ այդ փորձերը հետախոյզների ձեռքին ոչնչի պէտք չ'եկան և աննպատակ բան դուրս եկան։ Յոյց տալ, որ ուղեղային այս ինչ կենտրոնի գրգռումը ազդում է զանազան միանների բազմաթիւ խմբերի վրայ, այնպէս որ կովի, օրինակ, ետևի ոտները, պոչը, գլուխն ու ձայնական օրգաններն են շարժւում, մինչդեռ ուրիշ կենտրոնի գրգռումը առաջացնում է չաղկալի մէջ ականջների և բալոր չորս ոտների շարժումները, իսկ կատուի մէջ, որը ցեղակըցական տեսակէտից շատ չէ հեռացած չաղկալից, նոյն կենտրոնի գրգռումը արտայայտւում է պոչի, բերանի և լիզուի շարժումներով,—ցոյց տալ այս ամենը՝ նշանակում է ցոյց տալ այն-

պիսի փաստեր, որոնք տոանձին-առանձին են մնում, ոչնչով չեն շաղկապուած, ոչնչով չեն լուսաբանուած, ուստի և ոչ մի նշանակութիւն չ'ունեն։ Բայց նոյն այդ շարժումները—և բազմաթիւ ուրիշները—բոլորովին հասկանալի և իմաստալից են դառնում, եթէ մենք ընդունենք, որ դրանք ներքին զրգումների ոչ թէ անսխիական, այլ միջնորդական հետեանքներ, մտաւոր ըզգացողութիւնների արտայայտութեան միայն զանազան եղանակներ են,—ընդունենք որ զգացողութիւններն են ուղեղի զրգուած մասերի խկական, յատուկ պաշտօնները (ֆունկցիաներն), որոնց արտաքին արտայայտութիւնը զանազանակերպում է զանազան կենդանիների կազմութեան և սովորութիւնների համեմատ Գանգաքանութեան ճշմարտութիւնը հերքելու փոխարէն ժամանակակից հետազոտութիւնները իրանք միայն այն ժամանակն են հասկանալի դառնում, երբ բացատրւում են այդ զիտութեան մէջ վաղուց արդէն ճանաչուած փաստերի օգնութեամբ, այնպէս որ այդ հետազոտութիւնները միայն ամենազարմանալի և ամենահամոզիչ կերպով հաստատում են դանգաքանութեան ճշմարտութիւնը։

Բերենք այժմ համառօտակի գանգաքանութեան զլիսաւոր հիմունքները, որոնք սկզբում բոլորովին հերքւում էին, իսկ այժմ ամենքից ճանաչուած գիտութեան մասն են կազմում.

1) Գլխի ուղեղը խեղբի և՛ մտքի գործարան է։

Այս դրութիւնը հերքւում էր Վեդինբուրգեան Տեսութեանն մէջ, և նոյնիսկ Ջոն Ստիւարտ Միլլը գրում էր, որ «մտաւոր երևոյթները չեն կարող մեր նեարդային կազմութեան բնախօսական օրէնքներից բղխել»։

2) Երբ մնացած պայմանները հաւասար են, ուղեղի ծաւալը մտաւոր ոյժի չափն է։ Սկզբում այդ դրութիւնը հերքւում էր, բայց այժմ ճանաչուած է բոլոր բնախօսների կողմից։

3) Գլխի ուղեղը մի հաւաքածու է այն գործարանների, որոնցից ամեն մէկը համապատասխան ընդունակութեան ղեկավարն է։

Մինչև նոր ժամանակներս այս բանը հերքւում էր. առաջ պնդում էին, որ գլխի ուղեղը գործում է իբրև մէկ, ամբողջական գործարան. այժմ ընդունում են, որ այդպիսի առանձին գործարաններ գոյութիւն ունեն, բայց միայն պնդում են, որ նրանք դեռ դառնուած չեն։

4) Ուղեղի ճակատային մասը մեր ըմբռնողական և մտածողական ընդունակութիւնների նստատեղին է, գաղաթը կամ վերին մասը՝ մեր բարձրագոյն զգացմունքների կամ զուտ

մարդկային ընդունակութիւնների նստատեղի, ծոծրակի և քունքերի մասերը՝ մեր անասնական բնազդների նստատեղի:

Այս բանը երկար հերքում էր. մինչև անգամ հանգուցեալ դ-ր Կարպենտերը այն մտքի պաշտպան էր, որ ուղեղի ծոծրակային մասը, ամենայն հաւանականութեամբ, մտածողական ընդունակութիւնների նստատեղի է: Այժմ գրեթէ բոլոր բնախօսները ընդունում են, որ գլխուղեղի գործարանների այս ընդհանուր դասաւորութիւնը—ճիշտ է:

5) Գանդի ձեռ կենդանի ժամանակ այն աստիճան ճիշտ համապատասխանում է ուղեղի ձևին, որ հնարաւոր է վերջինիս դանադան մասերի զարգացումը որոշել, քննելով դանդը:

Այս դրութեան հերքելն էր, որ ինչպէս տեսանք՝ գլխաւոր արդէքն էր հանգիստանում դանգաբանութիւնը գիտութիւն ճանաչելու: Այժմ այս դրութիւնը արդէն ճանաչուած է բոլոր կաղմախօսներից: Հանգուցեալ Ջորջ Հումֆրիս, Կեմբրիջի համալսարանի պրոֆեսորը, իր Մարդկային կմալքը շարադրութեան մէջ կտրական կերպով ընդունում է այս կապակցութիւնը:

Այսպիսով դանգաբանութեան հինգ սկզբունքները, որոնք առաջ այնպիսի յամառութեամբ հերքում էին, ներկայումս ըստ երևոյթին արդէն ճանաչուած են ամենանշանաւոր ժամանակակից բնախօսների կողմից: Բայց քանի որ այս հիմնական սկզբունքները ճանաչուած են, պարզ է որ ամբողջ հարցը այժմ միայն նրա մէջն է, եթէ որչափ կարելի է շատ անգամ համեմատուի դանդի ձեռ ընդունակութեան հետ, որպէսզի որոշուի, թէ ինչ ընդունակութիւններ են շարունակ շաղկապում դանդի այս կամ այն մասի (ասել է՝ ներքուստ, ուղեղի մէջ վերջինիս համապատասխանող մասի) բարձրագոյն զարգացման հետ: Պնդել թէ այսպիսի համեմատութիւնները փտական չեն, առանց որեւէ լուրջ հիմք բերելու յօգուտ այս մտքի,—անխոհեմութիւն է: Ամբողջ հարցը նրա մէջն է—ճիշտ են արդեօք արուած այդ համեմատութիւնները: Իսկ թէ՛ որքան դրանք ճիշդ են արուած, այս բանը կարելի է ստուգել, երբ տեսնենք, տալիս են արդեօք դրանք յաւ պատրաստուած հետախոյզին հնարաւորութիւն առանձին անհատների բնաւորութիւնը, դանդերի ձևին նայելով, որոշելու բոլոր այն դէպքերում, երբ որեւէ գործարան կամ մի խումբ գործարաններ աւելի բարձր կամ ցածր են միջին չափերից: Առաջին դանգաբանների տուած եղրակիցութիւնների վերաստուգութիւնը տեղի է ունեցել տասնեակ, հարիւրաւոր և հազարաւոր անգամ, և ստացուած արդիւնքները մեծ մասամբ իսկ որ զարմանալի են եղել: Այն մարդիկ, որոնք ա-

ռաջին անգամ որոշում էին որեւէ գործարանի տեղադրութիւնը, այդ բանը անում էին ոչ թէ ըստ քմահաճոյքի, այլ երկար տարիներ դիտելուց և անթիւ անհամար անգամ՝ զարգացած գործարանը նրա կատարած դերի հետ համեմատելուց յետոյ։ Բացի այդ, յաջորդ գանդաբանները իրենց հաւատալով չեն ընդունել այդ եղբակացութիւնները, այլ ամեն անգամ մանրաքննին վերաստուգել են դրանց և վերջապէս ապացուցուած են համարել միայն աշուղութեամբ ամեն կողմից փորձելուց յետոյ։ Եւ հերքել բնաւորութիւն որոշելու այս միջոցները առանց լիակատար հետազոտութեան, առանց նոյնպիսի մանրաքննին վերաստուգութեան, որպիսին անում էին իրանք առաջին գանդաբանները, — հերքել՝ միայն հիմնուելով անորոշ խօսքերի վրայ, թէ դիտողութիւնները քիչ են եղել և թէ անգիտական եղանակով են կատարուած եղել, — ինքն ըստ ինքեան վերին աստիճան անդիտական է։

Եկող հարիւրամեակում գանդաբանութիւնը անկասկած ընդհանուրից կը ճանաչուի։ Նա կը ստիպի, որ իրան խելքի երեւոյթները մեկնելու ճիշտ գիտութիւն ճանաչեն։ Նա գործադրութիւն կը գտնի կրթութեան և ինքնակրթութեան մէջ, կը կերպարափոխի մեր վերաբերմունքը դէպի յանցաւորները և նոր ուղղութիւն կը տայ խելագարներին բժշկելու արհեստին, և սրանով նա բարձրագոյն տեղերից մէկը կը բռնի ուրիշ գիտութիւնների շարքում, և այն ժամանակ վերջին 60 տարիներ ընթացքում նրա դէմ ցոյց տուած արհամարհանքն ու չարախօսութիւնը կը նկատուի, որպէս աներևակայելի նեղամտութեան և նախապաշարմունքների ապացոյց, նախապաշարմունքների, որոնք տիրապետող են եղել գիտութեան մարդկանց մէջ հէնց այն ժամանակ, երբ նոյն մարդիկ այնպիսի փայլուն աշուղութեամբ աշխատում էին մտքի և բնութեան դադտնիքների յայտնագործութիւնների ուրիշ ասպարէզներում։

XVII

ՀԱՎԱԹԱՎՈՒԹԻՒՆԸ ՀԻՊՆՈՏԻՍՄԻ ԵՒ ՀՈԳԵՐՈՆԱԿԱՆ ՀԵՏԱ- ԶՈՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳԻՄ

Թէև այն առարկան, որի քննութեանն ենք այժմ անցնում, մի յայտնի առաջադիմութիւն է արել ներկայ հարիւրամեակի վերջին քառորդում, սակայն այս առաջադիմութիւնից առաջ

տիրում էր երկարատև տգիտութիւն և չափազանց խիստ հակառակութիւն, որը կոտորեց այնչափ խորիմաստ հետազոտութիւններով պարծեցող դարի անունը, մի դարի, երբ մարդկային գիտութեան բոլոր ուրիշ ճիւղերը ուսումնասիրութեան աղատութիւն էին վայելում: Այս հակառակութեան ընթացքի և բռնաւորութեան համառոտակի նկարագիրը պիտի շատ հետաքրքրական լինի: Նա կարող է նախազգուշացնել ամենքին, որոնք մինչև օրս էլ չափազանց հաւատ են ընծայում հրապարակական մամուլի և այն գրողների վայրախօսութիւններին, որոնք իրանց մի-մի հեղինակութիւն են ներկայացնում առանց առարկայի հետ բաւականաչափ ծանօթ լինելու:

Կենդանական մագնիսականութեան, կամ որպէս առաջ յաճախ անուանում էին՝ մեմմերիսմի, իսկ այժմ՝ հիպնոտիսմի երևոյթները գտել է Վիեննայի բժիշկ Մեամբերը մօտաւորապէս 1770 թւին: Իր գիւտը նա գործադրեց հիւանդութիւնները բժշկելու մէջ և այդպիսով մեծ ժողովրդականութիւն ձեռք բերեց Պարիզում, ուր տեղափոխուել էր պրակտիկայի համար: Այս առարկայի մասին նրա ունեցած գիտութիւնները՝ շատ բնական է որ դեռ ևս սաստիկ սահմանափակ էին, և այդ պատճառով նրա տուած բացատրութիւնները յաճախ սխալ էին: 1785 թւին նշանակուեց մի պետական մասնաժողով, որի անդամներն էին Լավուազիէ, Ֆրանկլին և սրանց նման ուրիշ աչքի ընկնող ֆիզիկոսներ և գիտնականներ: Մասնաժողովը գրտաւ, որ Մեամբերի՝ առանձին տեսակ մագնիսականութեանը վերադրած երևոյթներից շատերը կարելի է առաջ բերել հիւանդների մէջ հասարակ թելադրութեամբ, ուստի և բացասեց Մեամբերի ենթադրած ոյժերի գոյութիւնը: այս բանից յետոյ ինքն առարկան մի կողմ էր թողուած և երկար ժամանակ անտես էր արուած:

Սակայն ներկայ դարի սկզբում վերոյիշեալ դէպքերը նորից երևան եկան բաղմաթիւ բժիշկների պրակտիկայում թէ Պարիզում և թէ ուրիշ տեղերում: Բժիշկներից մի քանիսը շատ ժամանակ նուիրեցին այդ երևոյթների ուսումնասիրութեանը և հանդիպեցին այնպիսի փաստերի, որոնք անհերքելի կերպով վկայում էին, որ կարելի է կատարելապէս կարգաւ ուրիշի մրտքերը, որ գոյութիւն ունեն իսկական պարզատեսութիւնն ու ուրիշ շատ՝ ըստ երևոյթին գերբնական ոյժերը: Բժիշկներից շատերը հաստատ հաւաստիացան, որ այդ տարօրինակ երևոյթները իսկապէս տեղի ունեն, և թէ որ աստիճան այդ երևոյթները հետաքրքրութիւն արծարծեցին բժիշկների և առհասարակ գիտնականների շրջանում, կարելի է գաղափար կազմել ճիշդակա-

Բառգրքին մէջ տպագրուած ՃՄԵՍԻՆԵՐԻՄԱՆ վերտառութեամբ յօդուածից, ուր առարկայի մասին խօսուում է արդէն լրջմիտ ոճով և ուր այդտեակ երևոյթներէ գոյութիւնը ոչ մի կասկածի չէ ենթարկուում: Դ՛ր Ռոստանը գրում է, որ ինքը անձամբ ուսումնասիրել է մի պարզատես կին, որը ճշտութեամբ իմանում էր ժամանակը, երբ բժիշկը գրպանի ժամացոյցը կպցնում էր նրա ծոծրակին, մինչև անգամ այն դէպքում, երբ ինքը, բժիշկը, առանց ժամացոյցը նրան ցոյց տալու տեղափոխում էր սլաքները:

Իհարկէ՝ ամեն մէկը, ով առիթ չէր ունեցել առարկան բարեյաջող պայմանների մէջ ուսումնասիրելու, չէր կարող հաւատալ այսպիսի հրաքններին և ճարպիկ խաբեւայութեամբ էր բացատրում նրանց: Որպէսզի կարելի լինի հեղինակաւոր կերպով վճռել այն հարցը, թէ սրչափ իրաւացի էին կենդանական մագնիսականութեամբ պարապող մարդկանց վկայութիւնները, Պարիզի Բժշկական Ճեմարանը 1826 թւին առանձին մասնաժողով նշանակեց՝ տասնեմէկ անդամից բաղկացած, — իհարկէ բժիշկներից, այն էլ անպայման ձեռնհաս և անկողմընապահ մարդկանցից, — որոնց յանձնուած էր հետազօտել առարկան ամբողջութեամբ և ամենամանրաքննին կերպով: Ինն անդամները հինգ տարի շարունակ այցելում էին այն ժողովները, որտեղ կատարւում էին այդ փորձերը, և 1831 թւին ներկայացրին մի լիակատար և գեղեցիկ կազմուած գեկուցում, որ ըստօրագրել են բոլոր անդամները, ասել է՝ ընդունուել է ներանցից միաձայն: Այդ գեկուցումը պարունակում է իր մէջ բազմաթիւ կատարուած փորձերի բոլոր մանրամասնութիւնները և վերջանում է մի ընդհանուր եզրափակութիւն անելով այն ամենից, ինչ որ մասնաժողովը ապացուցուած է համարում, և միաժամանակ առաջ է բերում ընդհանուր բնաւորութիւն կրող չափազանց ծանրակշիռ դատողութիւններ: Քանի որ այդ գեկուցումը քիչ է յայտնի և նրա վրայ ուշադրութիւն չէ դարձրել մագնիսարարների դէմ գրողներից ոչ ոք, ուստի այստեղ եւ կը բերեմ դրա միջից ամենակարեւոր հատուածները:

Արքայական Բժշկական Ծեմարանից նշանակուած մասնաժողովի գեկուցումը Կենդանական Մագնիսականութեան մասին:

Ծգրափակութիւններն ու ընդհանուր նկատողութիւնները: Մասնաժողովը լիակատար անկողմնապահութեամբ գեկուցում է ներկայացնում այն ամենի մասին, ինչի վրայ նա նայում էր անմատահութեամբ, այստեղ սխտե-

մաբար բերուած է ամենը, ինչ որ ինքը դիտել է զանազան հանգամանքների մէջ և ինչին հետեւել է անձանձիր ուշադրութեամբ: Մասնաժողովը իրաւունք ունի ասելու, թէ այստեղ բերուած տեղեկութիւնները տալիս են դիտածի ճիշտ պատկերը: Զեզ ծանօթ են այն արդելքները, որոնց հանդիպել է մասնաժողովը. մասամբ նրանք էին որ պատճառ եղան ներկայ զեկուցման ուշանալուն, թէն բոլոր անհրաժեշտ նիւթերը արդէն վաղուց պատրաստ էին: Սակայն մենք մտադիր չենք ներողութիւն խնդրելու կամ ափսոսալու այս ուշանալուն առիթով, քանի որ վերջին հանգամանքը մեր դիտողութիւններին տալիս է հասուն և չըջանկատ ընաւորութիւն, որը աւելի վստահութիւն պիտի ներշնչէ ձեզ դէպի մեր բերած փաստերը. ազատ լինելով այդ փաստերը ճանաչելու կանխակալ տրամադրութիւնից, մենք ազատ ենք եղել նաև առաջին տպաւորութիւններով յափշտակելուց, մի բանից, որի մէջ դուք կը կարողանայիք մեզ մեղադրել, եթէ մենք այստեղ խօսէինք նոր հաւաքած փաստերի մասին: Պարտք ենք համարում աւելացնելու, որ մենք հեռու ենք այն մտքից, թէ աչքով տեսել ենք այն ամենը, ինչ որ պէտք էր տեսնել, և յաւակնութիւն չ'ունենք, որ դուք ընդունէք իբրև մի անվիճելի ճշմարտութիւն, թէ մագնիսականութեան մէջ ոչ մի ուրիշ դրական բան չը կայ, բացի ներկայ զեկուցման մէջ մեր յիշածից: Մենք ոչ թէ միայն սահման չենք դնում ընախօսական դիտութեան այս ճիւղի առաջ, այլ ընդհակառակը՝ յոյս ենք տածում, որ այստեղ նրա համար նոր ասպարէզ է բացուում: Երաշխաւոր լինելով մեր դիտողութիւնների ճշտութեան համար, մենք յիսաւատ առաջարկում ենք նրանց այն անձանց ուշադրութեանը, որոնք մեզնից յետոյ կը զբաղուեն կենդ. մագնիսականութեան ուսումնասիրութեամբ, և բաւականանում ենք առաջ բերելով հետեւեալ եզրակացութիւնները, որոնք անհրաժեշտ հետևողութիւն են մեր զեկուցման մէջ նկարագրուած փաստերից:

Այս ճշգրտակացութիւններին մեծագոյն մասը վերաբերում է կամ ըստ էութեան ոչ կարևոր, կամ ներկայումս արդէն ամենքից ճանաչուած կէտերին, ինչպէս են, օրինակ, — մագնիսացման կղանակը, այն անձանց տոկոսը, որոնց կարելի է մագնիսացնել, սպասողութեան ազդեցութիւնը, երևոյթների ձևավորուելը զանազան հանգամանքների միջոցին, կեղծաւորութեան հնարաւորութիւնը, մագնիսական քնի ընաւորութիւնը, մագնիսական բուժիչ ազդեցութիւնն ու սրա կարևորութիւնը, և ուրիշ սրանց նման կէտերը: Յաջորդ յօդուածի տակ զետե-

ղուած են աւելի կարևոր «եզրակցութիւններ» այնպիսի կէտերի մասին, որոնք մինչև այսօր էլ կամ կասկածի են ենթարկուած, կամ մերժուած են գիտնականների մեծագոյն մասի կողմէց:

«Մեր առջև փորձեր են արուեւել, որոնք ապացուցում են, որ մագնիսական քուէնը կարելի է առաջ բերել նոյնիսկ այնպիսի պարագաներում, երբ մագնիսացնելի անձը անկարող է դիտենալ կամ նկատել այն միջոցները, որոնք գործ են ածուած այդ նպատակով:

Եթէ մէկը արդէն առաջ երբեքիցէ մագնիսացրուած է եղել, միշտ հարկաւոր չի լինում շփել նրան կամ դիմել այսպէս կոչուած «պասերին», որպէսզի կրկին մագնիսացուի: Մագնիսարարի հայեացքը, նրա կամքը միայն բաւական է, որ նոյն հետեանքը ստացուի: Այդպիսի ղէպքերում կարելի է ոչ թէ միայն ներգործել մագնիսացրածի վրայ, այլև, առանց նրա գիտութեան, քնացնել և նորից արթնացնել՝ նրա աչքից հեռու մնալով, մի որոշ հեռաւորութիւնից, փակ դրան միջով»:

*
* *

«Մենք առիթ ենք ունեցել տեսնելու երկու քնածներ (սոմնամբուլաներ, լուսնոտներ), որոնք փակ աչքերով զանազանում էին իրանց առջև զետեղուած առարկաները. զանազանում էին խաղաթղթերի գոյնն ու անուան առանց նրանց շօշափելու. կարողում էին դուռած խօսքեր կամ ամբողջ տողեր գրքի միջից: Այս երևոյթները նկատուած էին նոյնիսկ այն ժամանակ, երբ աչքերի կոպերը ծածկուած էին լինում մատներով:

«Մենք հանդիպեցինք երկու լուսնոտների, որոնք ընդունակութիւն ունէին նախատեսելու կենդանի մարմնի այնպիսի գործողութիւնները, որոնք քիչ թէ շատ զատուած էին նրանցից և քիչ թէ շատ բարդ էին:

«Մենք միայն մէկ լուսնոտի հանդիպեցինք, որը կարողացաւ երեք անձնաւորութիւնների հիւանդութեանց նշանները որոյել, հետուից հաղորդակցութիւն ունենալով այդ անձնաւորութիւնների հետ, թէև մենք հետադատել ենք լաղմաթիւ լուսնոտներ»:

*
* *

«Մասնաժողովը առիթ չէ ունեցել դիտելու, և այդ պատճառով չէ էլ կարողացել ստուգել, որ լուսնոտները, մագնիսարարների պնդելով, ուրիշ ընդունակութիւններ էլ ունեն: Բայց մենք հաւաքել ենք և հաղորդում ենք ձեմարանին այնպիսի

փաստեր, որոնք բաւականին կարեւոր են, որպէսզի թոյլ տանք մեզ յոյս ունենալու, որ ձեմարանը իր կողմից ամենայն աջակցութիւն ցոյց կը տայ կենդանական մագնիսականութեան ուսումնասիրողներին—այս մագնիսականութիւնը հոգեբանութեան և բնական դիտութեան չափազանց հետաքրքրական մի ճիւղ է:

«Իհարկէ, մենք չենք համարձակուում մտածել, թէ դուք ամբողջովին համակարծիք կը լինէք մեզ՝ հետ և կ'ընդունէք այդ երեոյթների գոյութիւնը, որոնց մենք դիտել ենք և որոնց դուք ինքներդ չէք տեսել, չէք ուսումնասիրել, ուստի և հիմք չ'ունէք ոչ ճանաչելու, ոչ էլ բացասելու: Այս պատճառով մենք չենք պահանջում ձեզանից, որ կուրօրէն հաւատաք այն ամենին, ինչ որ հաղորդում ենք: Մենք լաւ ենք հասկանում, որ այս փաստերից մեծագոյն մասը այն աստիճան արտասովոր են, որ ձեզ համար դժուար պիտի լինի մեզ հաւատալ: Եթէ մենք և դուք տեղերս փոխէինք, գուցէ ինքներս էլ չը հաւատայինք ձեզ, եթէ դուք յայտարարէիք այս ատենանի առջև նոյն փաստերի մասին մեզ, որոնք, ինչպէս և դուք այժմս, ինքներս ոչինչ տեսած, ոչինչ դիտած, ուսումնասիրած չը լինէինք և ոչինչ վերաստուգել չը կարողանայինք:

«Մենք ձեզանից միայն մէկ բան ենք պահանջում, այն է, որ դուք վերաբերուէիք մեր հաղորդածին այնպէս, ինչպէս մենք կը վերաբերուէինք ձեւ հաղորդածին, այսինքն, որ դուք լիովին համոզուած լինէիք, որ մեր աշխատութեան վրայ չեն ազդել ոչ սէրը դէպի հրաշալին, ոչ էլ փառք վաստակելու ցանկութիւնը և ոչ մի ուրիշ տեսակ շահասիրութիւն: Մեզ ողևորողը եղել են աւելի վնաս դրողներ, որոնք աւելի արժանի են ձեզ,—գիտութեան սէրը և՛ մեր եռանդի և նախանձախնդրութեան վրայ ձեմարանիդ դրած յոյսերն արդարացնելու փափաղը:

Ստորագրեցին. Bourdois de la Motte (նախագահ),

Fouquier,

Gueneau dr.-Mussy,

Guersent,

Itard,

Leroux,

Marc,

Thillage,

Husson (զեկուցող):

Դժուար է երեակայել վերե բերուած ղեկուցումից մի աւելի ծանրակշիռն ու աւելի բարեխիղճը. սրա ամեն մի տողը վկայում է, որ մասնաժողովի անդամները զգոյշ և չրջանկատ

ու միաժամանակ՝ ձեռնհաս ու բարեխիղճ մարդիկ են եղել: Որ կենդանական մասնախառնութիւնը իրօք կայ և մեծ նշանակութիւն ունի, այս եզրակացութեանը եկել են նաև բազմաթիւ ականաւոր բժիշկներ Ռուսաստանում, Դանեսմարքայում, Սակսոնիայում և ուրիշ երկիրներում: Ֆրանսիական մասնաժողովի ղեկուցումը ամբողջովին թարգմանուեց անգլիերէն և 1836 թւին հրատարակուեց միստեր Կոլկհաունի «Isis Revelata» թերթի մէջ:

1837 թւին, շնորհիւ այն բանի, որ պարզատեսութեան շատ նոր դէպքեր էին նկատուել Ֆրանսիայի դանադան մասերում, Բժշկական ձեմարանը երեք հազար ֆրանկ մրցանակ առաջարկեց նրան, ով որ կ'ապացուցի, թէ կարող է կարգաւ առանց աչքերի Գոնուեց մէկը, որն ունէր այդ ընդունակութիւնը—Մոնպելիէի բժիշկ Դ-ը Պիթերէի աղջիկը, որի մասին հաստատ վկայութիւն էին տալիս բազմաթիւ լիակատար վստահութեան արժանի անձնաւորութիւններ: Առաջարկուած պարգևի չընտրելու հայրը նրան բերեց Պարիզ: Շատերը նրան քննեցին մասնաւոր կերպով, և մի քանի բժիշկներ—Օրֆիլա, Ռիբէս, Ռեվելիէ—Պարիզէ և ուրիշները—հաւաստիացան, որ նա պարզատեսութիւն ունի: Բայց ձեմարանի նշանակուած յատուկ մասնաժողովի անդամները, որոնք պակաս էին փորձուած, քան թէ 1831 թւի մասնաժողովի անդամները, պայման դրին, որ աղջրկայ գլուխը պիտի անպատճառ բոլորովին ծածկուած լինի, իսկ հայրը այս բանի հետ չը համաձայնուեց, և այսպիսով ձեռքից բաց թողուեց այդ անձնաւորութիւնը պաշտօնապէս քննելու յարմար դէպքը *): Այս պարզատես անձնաւորութիւնից յետոյ սկըսեցին ներկայանալ ուրիշները, բայց նրանց հետ արած փորձերը անաջող անցան: Հետեանքը սոսկ բացասական էր, և որովհետև փորձերի ժամանակ քննուողներից մի քանիսը կասկածի ենթարկուեցին, որպէս պարզ խաբեւաններ կամ խաբեւայութեան հակում ունեցողներ, ուստի մասնաժողովը իր ղեկուցման մէջ չը ճանաչեց պարզատեսութեան գոյութիւնը: Պատահեց այն, ինչ—որ առաջուց արդէն նախագուշակուած էին այդ առարկայով լրջօրէն պարապողներից շատերը: Կեմբրիջի համալսարանի պրո-

*) Սովորաբար հետեւեալ միջոցն է դորժ դրում—աչքերը նախ կապում են կտաւէ թաշկիռակով, կապի վրայ փաթաթում են մահուղէ կտոր և այս ամենի վրայ ծածկում սև թաւէ դիմակ: Արագօի և ուրիշ հետախոյնների կարծեքով, այս նախազուշութիւնը բոլորովին բաւական է փորձերն անելու համար: Բայց այս միջոցին մասնաժողովի անդամները ոչ մի վստահութիւն չուզեցին ընծայել:

Ֆեոստոր Վիլլեամ Գրեգորին, կենդան. մագնիսականութիւնը քսան տարի ուշիուշով ուսումնասիրելուց յետոյ, հիմնուելով իր ընդարձակ անձնական փորձի վրայ, դրում էր. «Ինչ որ վերաբերում է պարզատեսութեանը, այս երևոյթը կարելի է բոլորովին բաւարար կերպով ցոյց տալ միայն բոլորովին մասնաւոր փորձերի ժամանակ—այս բանի մէջ իմ երկարատե անձնական փորձը միայն հաստատեց այն, ինչ որ պնդում էին առաջուայ ամենաառաջնակարգ ուսումնասիրողները: Հաւատացած եմ, որ ով էլ որ վճռէր իր ժամանակի և աշխատանքի մի մասը նուիրել այս երևոյթի ուսումնասիրութեանը, նմանօրինակ դէպքերի պատահել կը կարողանար իր սեփական կեանքում կամ իր բարեկամները կեանքում»:

«Կենդանական մագնիսականութիւն» վերնադիրը կրող նամակների մէջ պրոֆ. Գրեգորին պատմում է մի քանի անվիճելի դէպքերի մասին, որ ինքը վերաստուգել է. Դ-ր Գադգոկ, մայոր Բոկլէյ, Վալտեր Տրավելեան, Միսս Մարտինո, դ-րներ Էսգէյլ, Լի և Էյլիոտսոն—ամենքն էլ առիթ են ունեցել պատահելու ամենահամոզիչ դէպքերի, որոնցից չատերը հրատարակուեցին նաև մամուլի մէջ. բաղմաթիւ յայտնի բժիշկներ և գիտնականներ մայր ցամաքի վրայ եկել են նոյնանման եզրափակութիւններին, որոնք ամբողջովին հաստատում էին 1831 թ. ֆրանսիական մասնաժողովի վկայութիւնները և ապացուցում էին, որ 1837 թ-ի մասնաժողովի բացասական եղբայրակութիւնները առաջ են եկել անդամների անփորձ և նախապաշարուած լինելուց: Եւ այնուամենայնիւ, չը նայելով այս անհրեքելի ապացույցներին, հիսլենոտիօմի առաջ բերած՝ բարձրագոյն կարգի երևոյթների ժամանակակից հակառակորդները, ըստ երևոյթին, կամ չեն լսել, թէ ինչ բաղմակողմանի զեկուցում էր ներկայացրել ֆրանսիական Բժշկական Ճեմարանի առաջին մասնաժողովը, կամ չի ընթերցում են այդ մասնաժողովը երկրորդի հետ, որը 1837 թ-ին բացասական պատասխան էր տուել այդ երևոյթների մի յայտնի տեսակի առիթով:

Այսպէս, օրինակ, հանգուցեալ դ-ր Կարպենտերը բոլորովին չը գիտէր էլ, որ գոյութիւն է ունեցել 1826—1831 թ. մասնաժողովը՝ Նոյնպէս ոչինչ չը գիտէին կենդան. մագնիսականութեան համար նպաստաւոր կարծիք յայտնող մասնաժողովի մասին և՛ Չամբերսը, որպէս երևում է նրա «Հանրագիտարանի» վերջին հրատարակութիւնից, Բիւլնները, Սպիտտան և ուրիշները:

Բերենք այլևս մէկ նմուշ, թէ ինչպէս էին վերաբերում պարզատեսութեան գոյութիւնը ապացուցող վկայութիւններին:

Դ-ր Կարպենտերը նկարագրում է, թէ ինչպէս ինքը մի քանի անգամ այցելել է դ-ր Ֆորբէսի հետ, Ալեքսիս և Ալֆոնս Դիդիէ քննածներին, և որովհետև երկուսն էլ ոչ մի համոզիչ բան չը գտան այդ դիտողութիւնների մէջ, ուստի այնպատում են հաւատացնել ընթերցողին, թէ առհասարակ նոյնպէս ոչ ոք ոչ մի համոզիչ բան երբէք չէ գտել այդպիսի դէպքերում: Մինչդեռ յայտնի բժիշկ դ-ր Լի, որը կարող է նոյնչափ վստահելի վկայ համարուել, որչափ և դ-ր Կարպենտերը կամ Ֆորբէսը—իր հանրածանօթ Վենդանական մազնիսականութիւնը հեղինակութեան մէջ 22 երես է յատկացնում իր՝ Բրայտոնում 1849 թ. արած անձնական փորձերին նոյն Ալեքսիսի հետ. այս գրքի մէջ կան այնչափ բազմաթիւ և բազմազան ապշեցնող փորձեր, որ նրանք բոլորովին գերակշռում են այն բացասական եզրափակութիւնները, որ առաջ է բերում Կարպենտերը: Ի լրումն այդ փորձերի՝ հրատարակուած կան ուրիշ զարմանալի փորձեր, որոնցից այստեղ կը բերենք երկուսը: Սերժանտ Կոկսը իր՝ Վինչ եւ Եսս գրուածքի մէջ նկարագրում է մի փորձ, որը արել են մի քանի էքսպերտներ, որոնց թւում էր և ինքն շեռաւոր քաղաքում ապրող նրանց մի ծանօթը դիտմամբ դրել էր թղթի վրայ մի քանի նախադասութիւններ և նամակը ծրարած ուղարկել այնպէս, որ էքսպերտներից ոչ ոք չ'իմանար, ինչ էր այնտեղ գրուած: Այդ ծրարը դրին հետզհետէ ուրիշ վեց՝ հաստ թղթից չինուած ծրարների մէջ, կնքեցին և յանձնեցին Ալեքսիսին, որը ծրարը դրեց ճակատին և երեք բոպէից գրեց նամակի բովանդակութիւնը ճշտութեամբ, մինչև անգամ նոյն ձևով, որով գրուած էր նամակը: Թող որն է մէկը համեմատէ Կարպենտերի տուած բացատրութիւնները, թէ ինչպէս է, նրա կարծիքով, տեղի ունենում այս ընթերցանութիւնը, և նա կը տեսնի, որչափ այդ բացատրութիւնները չեն համապատասխանում Կոկսի և ուրիշ բազմաթիւ հետախոյզների արած փորձերի նման փորձերին:

Միւս փորձը արել է ժամանակակից մասնագէտ «մոզերից» ամենանշանաւորը, հռչակաւոր Հոդէնը, որը, մարկիզ դէ-Միրվիլի խնդիրքով, երկու սէանս է ունեցել Ալեքսիսի հետ: Ահա նրա պատմութիւնը, որը բերուած է Լիի մօտ: Առաջին սէանսի ժամանակ տեղի ունեցածը նկարագրելուց յետոյ Հոդէնը ասում է. «Ես պէտք է ասեմ, որ այստեղ պատմուած փաստերը բոլորովին ճիշտ են, և քանի աւելի եմ մտածում սրանց մասին, այնքան աւելի եմ դժուարանում ասելու, թէ իմ արուեստի նիւթը կազմող երևութիւնների ո՞ր տեսակին են պատկանում դրանք» (1849 թ. մայիսի 10-ին):

